

ԱՀ – 896
02.12.2024

ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության
ծառայության պետի տեղակալ
տիկին Իրինա Դավթյանին

Հարգելի՛ տիկին Դավթյան,

Տեղեկացնում ենք, որ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի հետ գործակցության շրջանակներում ոլորտի առաջատար փորձագետ ներգրավելով, Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության ակտիվ մասնակցությամբ մշակել է «Փախստականների և ապաստանի մասին օրենքում» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ:

Կից ներկայացվում են համապատասխան նախագիծն ու հիմնավորումը:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունը՝ կատարելագործելու միջազգային պաշտպանության իր համակարգը, ինչպես նաև այդ համատեքստում օրենսդրական դաշտը համապարփակ բարեփոխելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք դիտարկել համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու և նախագծի հետագա ընթացքը ապահովելու հնարավորությունը:

Առդիր՝ 2 փաստաթուղթ:

Հարգանքով՝

**«Առաքելություն Հայաստան»
ԲՀԿ նախագահ**


Ե. Մխիթարյան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի ամբողջ տեքստում՝

1) «Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «լիազոր մարմին» բառերով, բացառությամբ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի.

2) «Ազգային անվտանգության ծառայություն» և «Ազգային անվտանգության մարմին» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմին» բառերով, բացառությամբ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի.

3) «ապաստանի տրամադրման հարցով վարչական վարույթ», «ապաստանի տրամադրման նպատակով հարուցված վարչական վարույթը», «ապաստանի տրամադրման ուղղությամբ հարուցված վարույթ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ապաստանի տրամադրման վարույթ» բառերով.

4) «սույն օրենք» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «Օրենք» բառով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածում 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փախստականի ճանաչման և ապաստանի տրամադրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև ապահովում է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի և «Փախստականների կարգավիճակի մասին» 1967 թվականի արձանագրության (այսուհետ՝ Կոնվենցիա) կիրառումը և ճանաչում է բոլոր օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ միասին՝ նաև՝ օտարերկրացիներ)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության պետական սահմանին ապաստան հայցելու, ինչպես նաև ապաստան ստանալու իրավունքը, եթե նրանք բավարարում են ապաստանի տրամադրման համար Օրենքով սահմանված պահանջները:

2. Օրենքը, միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան, պաշտպանում է նաև բոլոր օտարերկրացիներին Հայաստանի Հանրապետությունից հարկադրաբար հեռացվելուց, եթե նրանց սպառնում է խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի ենթարկվելու վտանգ՝ Հայաստանի Հանրապետությունում օժանդակ պաշտպանություն կամ հանդուրժվողի կարգավիճակ տրամադրելու միջոցով:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունում միջազգային պաշտպանությունը

1. Հայաստանի Հանրապետությունում միջազգային պաշտպանությունը (այսուհետ՝ միջազգային պաշտպանություն) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրացիներին փախստականի կարգավիճակ և

ապաստան, ինչպես նաև օժանդակ պաշտպանություն կամ հանդուրժվողի կարգավիճակ տրամադրելն է:

2. Միջազգային պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում պետք է դիտվի որպես խաղաղ և մարդասիրական գործողություն, և չի ենթադրում որևէ քննադատություն օտարերկրացու քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության կամ որևէ այլ երկրի հանդեպ:

3. Փախստականի կարգավիճակի տրամադրումը ներառում է Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրումը, բացառությամբ, եթե փախստականին ապաստանի տրամադրումը մերժվում է կամ ապաստանը դադարեցվում է Օրենքով նախատեսված հիմքերով:

4. Ապաստանն օտարերկրացուն Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սկզբունքի կիրառումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց՝ Կոնվենցիայով, Օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները:

5. Ապաստանը տարածվում է նաև Կոնվենցիան ստորագրած այլ պետության կողմից փախստական ճանաչված օտարերկրացու վրա, բացառությամբ եթե կիրառելի են ապաստանի տրամադրումը մերժելու՝ Օրենքով սահմանված հիմքերը:

6. Օժանդակ պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է օտարերկրացու նկատմամբ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սկզբունքի կիրառումը, ինչպես նաև այդ սկզբունքի պաշտպանությունից օգտվող անձանց՝ Օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները:

7. Հանդուրժվողի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է օտարերկրացու նկատմամբ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սկզբունքի կիրառումը այն դեպքում,

երբ անձի վրա այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են (mutatis mutandis), տարածվում են փախստականի կարգավիճակի բացառման հիմքերը կամ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված բացառությունները:»:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում «լքել են» բառերը փոխարինել «չեն կարող վերադառնալ» բառերով:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածում «ապաստան հայցող կամ փախստական» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ապաստան հայցող, փախստական կամ օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածում 1-ին մասի՝

1) 1-ին կետի «ռասայական, կրոնական, ազգային» բառերը փոխարինել «ռասայի, կրոնի, ազգության» բառերով.

2) 2-րդ կետի «ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը» բառերը փոխարինել «չի կարող վերադառնալ իր քաղաքացիության երկիր, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիր» բառերով:

Հոդված 7. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին հոդված.

«Հոդված 6.1. Ներքին տեղափոխման այլընտրանքը

1. Ապաստան հայցողը չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ փախստականի կարգավիճակին ներկայացվող պահանջները, եթե իր քաղաքացիության երկրում, իսկ քաղաքացիություն չունեցող անձի դեպքում՝ իր

նախկին մշտական բնակության երկրում (ծագման երկրում) ունի ներքին տեղափոխման այլընտրանք:

2. Ներքին տեղափոխման այլընտրանքը կիրառվում է, եթե ապաստան հայցողը կարող է ապահով և օրինական կերպով հասնել, մուտք գործել, բնակություն հաստատել և ողջամտորեն ակնկալել, որ հնարավորություն կունենա բնականոն կյանք վարել իր ծագման երկրի այն տարածքում, որտեղ չունի հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ, ինչպես նաև համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների ենթարկվելու վտանգ՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները գնահատելիս հաշվի են առնվում ծագման երկրի համապատասխան տարածքում առկա ընդհանուր իրավիճակը, ինչպես նաև ապաստան հայցողի անհատական հանգամանքները:

4. Նախքան իր ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելը ապաստան հայցողը տեղեկացվում է ներքին տեղափոխման այլընտրանքի հնարավոր կիրառելիությունը դիտարկելու մասին՝ կոնկրետ տարածքի նշմամբ, որը դիտարկվում է որպես ներքին տեղափոխման այլընտրանք: Ապաստան հայցողին հնարավորություն է տրվում ներկայացնելու հիմնավոր պատճառներ առ այն, որ ներքին տեղափոխման այլընտրանքը կիրառելի չէ՝ պայմանավորված իր անհատական հանգամանքներով:»:

Հոդված 8. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.2-րդ հոդված.

«Հոդված 6.2. Հետապնդումը

«1. Որպեսզի գործողությունը (անգործությունը) համարվի Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հետապնդում, այն պետք է՝

1) իր բնույթով կամ պարբերականությամբ լրջորեն խախտի մարդու հիմնարար իրավունքը կամ

2) ներգործության տարբեր միջոցների հանրագումարում առաջացնի սույն մասի 1-ին կետում նշվածին համանման ծանր հետևանքներ:

2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ հետապնդման պատճառների առկայությունը հաստատվում է, եթե առկա է պատճառահետևանքային կապ դրանց և հետապնդման կամ հետապնդումից պաշտպանության բացակայության միջև, ինչպես նաև եթե այդ պատճառները հետապնդմանը կամ պաշտպանության բացակայությանը նպաստող գործոններ են:

3. Օրենքով սահմանված պատճառներով հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղը կարող է հաստատվել նաև այն դեպքում, երբ հետապնդման պատճառ հանդիսացող ռասան, կրոնը, ազգությունը, սոցիալական որոշակի խմբի պատկանելությունը կամ քաղաքական հայացքները անձին վերագրվում են:»:

Հոդված 9. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի ամուսինը, մինչև 18 տարեկան զավակը, ինչպես նաև նրա խնամքի տակ գտնվող և Հայաստանի Հանրապետությունում նրա հետ համատեղ բնակվող այլ անձը (ներառյալ՝ չափահաս զավակը) նույնպես համարվում են փախստական և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած:».

2) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

3) 3-րդ մասից հանել «և չունեն այդ երեխայի քաղաքացիությունից տարբերվող արդյունավետ պաշտպանություն տրամադրող որևէ այլ պետության քաղաքացիություն» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Սույն հոդվածի դրույթները այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են (*mutatis mutandis*), տարածվում են նաև օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձանց վրա:»:

Հոդված 10. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) **հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներ ու փախստականներ՝** հատուկ կարիք ունենալու հանգամանքով պայմանավորված խոցելի անձինք, ներառյալ՝ ապաստան հայցող կամ փախստական երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք, հղի կանայք, տարեցներ (60 տարեկանից բարձր տարիքի), միայնակ ծնողներ, որոնք ունեն անչափահաս երեխաներ, ծանր հիվանդությամբ տառապող անձինք, հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք կամ թրաֆիքինգի կամ խոշտանգման կամ բռնության այլ ձևերի զոհեր.»:

Հոդված 11. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ռասայական, կրոնական, ազգային» բառերը փոխարինել «ռասայի, կրոնի, ազգության» բառերով.

2) 1-ին մասի երկրորդ պարբերության «հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում Հայաստանի Հանրապետության անվտանգության համար, կամ որը, օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված լինելով առանձնապես ծանր հանցագործության համար, վտանգ է ներկայացնում հասարակության համար» բառերը փոխարինել «հիմնավոր պատճառներով լուրջ վտանգ է ներկայացնում պետական անվտանգության համար կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է այնպիսի առանձնապես լուրջ հանցագործության համար, որի պատճառով վտանգ է ներկայացնում հասարակության համար» բառերով.

3) 2-րդ մասում «չի կարող արտաքսվել» բառերը փոխարինել «չի կարող արտաքսվել, հանձնվել, վտարվել կամ այլ կերպ հարկադիր հեռացվել» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Սույն հոդվածի

դրույթները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության պետական սահմանին ապաստան հայցող անձանց նկատմամբ:».

4) 3-րդ մասի «որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների» բառերը փոխարինել «որ նա կենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կամ մահապատժի» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Չվերադարձելիության սկզբունքը նաև օտարերկրացուն հարկադիր չհեռացնելն է այնպիսի երկիր, որտեղից օտարերկրացին կարող է այնուհետև արտաքսվել, հանձնվել, վտարվել կամ այլ կերպ հարկադիր վերադարձվել մեկ այլ երկիր, որտեղ առկա է սույն հոդվածի 1-ին կամ 3-րդ մասով նախատեսված վտանգը:»:

Հոդված 12. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Փախստականին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցվում է և նրա նկատմամբ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը այլևս կիրառելի չէ, եթե նա հիմնավոր պատճառներով լուրջ վտանգ է ներկայացնում պետական անվտանգության համար կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է այնպիսի առանձնապես լուրջ հանցագործության համար, որի պատճառով վտանգ է ներկայացնում հասարակության համար:».

2) 5-րդ մասի «փախստականի կարգավիճակը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը» բառերը:

Հոդված 13. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Փախստականին ապաստանի տրամադրումը կարող է մերժվել, եթե

1) նա ժամանել է Օրենքի 11.1-րդ հոդվածի իմաստով երրորդ ապահով երկրից, բացառությամբ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխաների.

2) նրա նկատմամբ կիրառելի են Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված բացառությունները:»:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-ին հոդվածով.

«Հոդված 11.1. Երրորդ ապահով երկիրը

1. Երրորդ երկիրը, որտեղից ժամանել է փախստականը, համարվում է ապահով երկիր, եթե

1) առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հետևանքներն առաջանալու վտանգ,

2) առկա չէ չվերադարձելիության սկզբունքի խախտման ենթարկվելու վտանգ, ինչպես սահմանված է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերում,

3) առկա է փախստականի կարգավիճակի և միջազգային պաշտպանության այլ կարիքների որոշման ընթացակարգերի իրական և արդյունավետ հասանելիություն,

4) առկա է փախստականի և երրորդ ապահով երկրի միջև այնպիսի կապ (բնակության տևողությունը և բնույթը, ընտանեկան կամ այլ սերտ կապերի առկայությունը և այլն), որը ավելի սերտ է, քան նրա կապը Հայաստանի Հանրապետության հետ և որը ողջամիտ է դարձնում փախստականի կողմից պաշտպանության հայցումը այդ երկրից,

5) առկա են բավարար երաշխիքներ, որ երրորդ երկիրը կընդունի փախստականին,

6) առկա են բավարար երաշխիքներ, որ երրորդ երկրում փախստականի համար կապահովվեն Կոնվենցիայով և մարդու հիմնարար իրավունքների մասին միջազգային փաստաթղթերով սահմանված իրավունքները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքները գնահատելիս հաշվի են առնվում երրորդ երկրում առկա ընդհանուր իրավիճակը, ինչպես նաև փախստականի անհատական հանգամանքները:

3. Փախստականը նախապես տեղեկացվում է երրորդ ապահով երկրի հիմքով ապաստանի տրամադրման մերժման հնարավորության մասին: Փախստականին հնարավորություն է տրվում ներկայացնելու հիմնավոր պատճառներ առ այն, որ երրորդ երկիրը ապահով չի կարող համարվել՝ պայմանավորված իր անհատական հանգամանքներով:»:

Հոդված 15. Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ապաստանի հայցը օտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն ստանալու նպատակով սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված մարմիններին ներկայացված խնդրանք կամ դիմում է:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ապաստանի խնդրանք է համարվում Հայաստանի Հանրապետության պետական սահմանին Ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմին) կազմում գործող Հայաստանի Հանրապետության սահմանապահ զորքերին (այսուհետ՝ Սահմանապահ զորքեր), իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ լիազոր մարմին, ինչպես նաև Ոստիկանությանը, իսկ ազատազրկված անձանց դեպքում՝ ազատազրկման վայրի վարչակազմին, քրեական վարույթն իրականացնող մարմին կամ լիազոր մարմին բանավոր, գրավոր, ժեստերի լեզվով կամ հաղորդակցության որևէ այլ միջոցով արված ցանկացած հայտարարություն, որն արտահայտում է Հայաստանի

Հանրապետությունում պաշտպանություն գտնելու նրա ցանկությունը: Ազատագրկման վայրում գտնվող օտարերկրացին ապաստանի խնդրանք կարող է ներկայացնել նաև իր փաստաբանի միջոցով:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սահմանապահ զորքերը Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին գրավոր և նրանց համար հասկանալի լեզվով իրազեկում են այն օտարերկրացիներին, ում մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվել է «Օտարերկրացիների մասին» օրենքի համաձայն:»:

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ապաստան հայցող ամբողջ ընտանիքի համար ապաստանի խնդրանքը և դիմումը Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ընտանիքի անդամների անունից կարող է ներկայացնել ընտանիքի որևէ անդամ, ինչը, սակայն, չի սահմանափակում ընտանիքի մյուս անդամների՝ ցանկացած պահի ապաստանի անհատական հայց ներկայացնելու իրավունքը:»:

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Անչափահասի անունից ապաստանի հայցը ներկայացնում է անչափահասի օրինական ներկայացուցիչը կամ խնամքն իրականացնող այլ անձը, բացառությամբ, երբ անչափահասի կողմից անձամբ ապաստանի հայցի ներկայացումը բխում է երեխայի լավագույն շահից: Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի դեպքում ապաստանի հայցը ներկայացնում է անչափահասը, կամ նրա խնամակալը (հոգաբարձուն), կամ փաստաբանը, կամ այն հաստատության ներկայացուցիչը, որի հոգածության ներքո գտնվում է անչափահասը:»:

Հոդված 16. Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը, բացառությամբ Օրենքի 14.1-ին հոդվածով սահմանված դեպքերի, տեղավորվում են ապաստան

հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Լիազոր մարմինը ժամանակավոր տեղավորման կենտրոնում ապաստան հայցողին չտեղավորելու դեպքում նրան տրամադրում է դրամական օգնություն, որի տրամադրման կարգը և չափը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

3. Բավարար կենսամակարդակի ապահովման համար սնունդ, առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքներ (անկողնային պարագաներ, հիգիենայի պարագաներ, հագուստ, կոշիկ և այլն) ձեռք բերելու, ինչպես նաև որոշակի ազատ միջոցներ ունենալու նպատակով ապաստան հայցողներին պետական միջոցներով տրամադրվում է օգնություն մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը, բացառությամբ Օրենքի 14.1-ին հոդվածով սահմանված դեպքերի: Օգնության տրամադրման եղանակը, չափը և կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ: Օգնությունը սահմանելիս պետք է ապահովվի հավասար վերաբերմունք նույն իրավիճակում գտնվող ապաստան հայցողների նկատմամբ:

4. Կենսաապահովման պայմանները տրամադրելիս լիազոր մարմինը գրավոր տեղեկացնում է կենսաապահովման պայմանների տրամադրման, ինչպես նաև դրանց փոխարինման, նվազեցման և դադարեցման կարգի վերաբերյալ:

5. Կենսաապահովման պայմանների ապահովման նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծվում է իրավասու պետական մարմինների, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, միջազգային կազմակերպությունների և ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողով, որի կազմակերպման և գործունեության կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:

Հոդված 17. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով.

«Հոդված 14.1. Կենսաապահովման պայմանների փոխարինումը, նվազեցումը և դադարեցումը

1. Լիազոր մարմինը կարող է ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակեցումը (տեղավորումը) փոխարինել Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրամական օգնությամբ, եթե

1) նախազգուշացվելուց հետո ապաստան հայցողի կողմից խախտվել են ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության կարգապահական կանոնները.

2) հատուկ կարիքները կարող են առավել արդյունավետ բավարարվել դրամական օգնության եղանակն ընտրվելու դեպքում.

3) ժամանակավոր տեղավորման կենտրոնում ապաստան հայցողը բնակվում է ավելի քան ինը ամիս և այդ ժամանակահատվածում նրա մոտ բացակայում է ինքնաբավության հասցնող դրական փոփոխությունը (առանց օբյեկտիվ պատճառների չի մասնակցում առաջարկվող դասընթացներին, չի ընդունում աշխատանքի տեղավորվելու առաջարկները և այլն) կամ աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին) կողմից Կառավարության սահմանած կարգով ճանաչվել է ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակեցվելու կարիք չունեցող:

2. Լիազոր մարմինը կարող է նվազեցնել, իսկ բացառիկ դեպքերում՝ դադարեցնել կենսաապահովման պայմանների տրամադրումը, եթե

1) Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետի համաձայն ապաստանի տրամադրման վարույթը կասեցվել է.

2) ապաստան հայցողը թաքցրել է իր ֆինանսական միջոցները և չհիմնավորված օգնություն է ստանում պետության միջոցներից.

3) ապաստան հայցողը աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի կողմից Կառավարության սահմանած կարգով ճանաչվել է կենսաապահովման կարիք չունեցող.

4) ապաստան հայցողը լրջորեն խախտել է ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության կարգապահական կանոնները կամ իր գործողություններով լուրջ վտանգ է ներկայացնում այլ անձանց անվտանգությանը, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքի.

5) Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված դիմումն առանց քննության է թողնվել լիազոր մարմնի կողմից:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հիմքով կենսաապահովման պայմանների տրամադրումը վերականգնվում է կասեցված վարույթը վերսկսելիս:

4. Նախքան կենսաապահովման պայմանների փոխարինման, նվազեցման կամ դադարեցման վերաբերյալ որոշում կայացնելը լիազոր մարմինը պետք է ապաստան հայցողին հնարավորություն տա ներկայացնելու իր դիրքորոշումը:

5. Եթե ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության կարգապահական կանոնների խախտումը պայմանավորված է անձի հոգեկան առողջության խնդիրներով կամ այլ հատուկ կարիքի առկայությամբ, ապա լիազոր մարմինը ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակեցումը փոխարինում է դրամական օգնությամբ կամ ապահովում է անձի տեղավորումը համապատասխան խնամք իրականացնող հաստատությունում:

6. Լիազոր մարմնի որոշումը պետք է լինի օբյեկտիվ, պատճառաբանված, հիմնված անձի անհատական հանգամանքների վրա՝ հատուկ կարիքների և համաչափության սկզբունքի հաշվառմամբ: Կենսաապահովման պայմանները չեն կարող նվազեցվել կամ դադարեցվել, եթե նվազեցումը կամ դադարեցումը ապաստան հայցողին կզրկի հիմնական կարիքները հոգալու հնարավորությունից:

Լիազոր մարմինը որոշում կայացնելիս կարող է գրավոր ձևով հիմնավորել, որ դրա անհապաղ կատարումն անհրաժեշտ է՝ ելնելով հանրային շահից:

7. Եթե փախստական ճանաչելու մասին որոշումը կայացվել է ավելի վաղ, քան ապաստանի դիմումը լիազոր մարմնում քննարկելու համար նախատեսված 90 աշխատանքային օրվա ժամկետի լրանալը, ապաստան ստացած փախստականին լիազոր մարմինը կարող է թույլատրել շարունակել օգտվել կենսաապահովման պայմաններից մինչև մեկ ամիս ժամկետով՝ որոշումը կայացվելու օրվանից հաշված, կանխելու բավարար կենսամակարդակ ունենալու փախստականի իրավունքի խախտումը:

8. Լիազոր մարմնի՝ սույն հոդվածի համաձայն կայացված որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգով:»:

Հոդված 18. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին գլխով.

«Գ Լ ՈՒ Խ 1.1

Օժանդակ պաշտպանությունը և հանդուրժվողի կարգավիճակը

Հոդված 14.2. Օժանդակ պաշտպանության և հանդուրժվողի կարգավիճակները

1. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ տրամադրվում է այն դեպքում, երբ օտարերկրացին չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ փախստականի կարգավիճակին ներկայացվող պահանջները, սակայն նրա նկատմամբ կիրառելի է Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը:

2. Օժանդակ պաշտպանության կարգավիճակը տրամադրվում է Օրենքի 45-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ չի տրամադրվում այն օտարերկրացուն, ում նկատմամբ տարածվում են փախստականի կարգավիճակի բացառման հիմքերը կամ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված բացառությունները՝ այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են (*mutatis mutandis*):

4. Այն դեպքում, երբ օտարերկրացու նկատմամբ կիրառելի է Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը, սակայն առկա են օժանդակ պաշտպանության կարգավիճակի տրամադրումը մերժելու՝ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերը, նրան տրամադրվում է հանդուրժվողի կարգավիճակ:

5. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձն ունի Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի իրավունքներին ու պարտականություններին հավասար իրավունքներ և պարտականություններ:

6. Հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձն ունի անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հավասար իրավունք:

7. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձին տրամադրվում է նրա անձը, Հայաստանի Հանրապետությունում կարգավիճակը և օրինական բնակությունը հաստատող՝ Կառավարության որոշմամբ սահմանված փաստաթուղթ:

8. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձին տրամադրվում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ Օրենքի 30.1-րդ և 58-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ նրան վերաբերելի մասով (*mutatis mutandis*), եթե օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձը չունի այլ վավեր ճամփորդական փաստաթուղթ:

9. Հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձին տրամադրվում է նրա անձը, Հայաստանի Հանրապետությունում կարգավիճակը և օրինական գտնվելը հաստատող՝ Կառավարության որոշմամբ սահմանված փաստաթուղթ:

10. Օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձին և հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձին տրամադրվող փաստաթղթերի նկարագիրը և տրամադրելու (փոխանակելու) կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 14.3. Օժանդակ պաշտպանության կարգավիճակի դադարեցումը

1. Օժանդակ պաշտպանության կարգավիճակը դադարեցվում է, եթե

1) այն հանգամանքները, որոնք հիմք են հանդիսացել այդ կարգավիճակի տրամադրման համար, դադարել են գոյություն ունենալ: Այդպիսի հանգամանքները գնահատելիս հաշվի է առնվում, որ իրավիճակի փոփոխությունները ոչ ժամանակավոր և այնքան հիմնավոր են, որ լուրջ վնասի իրական վտանգ այլևս առկա չէ.

2) օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձը ձեռք է բերել Հայաստանի Հանրապետության կամ որևէ այլ պետության քաղաքացիություն և օգտվում է այդ պետության պաշտպանությունից.

3) օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձը կամավոր վերահաստատվել է այն երկրում, որը լքել էր, կամ կամավոր կրկին ընդունել է այն երկրի պաշտպանությունը, որի քաղաքացին է.

4) օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձը հիմնավոր պատճառներով լուրջ վտանգ է ներկայացնում պետական անվտանգության համար, կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է այնպիսի առանձնապես լուրջ հանցագործության համար, որի պատճառով վտանգ է ներկայացնում հասարակության համար:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետը չի կիրառվում օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած այն անձի նկատմամբ, ով կարող է ներկայացնել նախկին լուրջ վնասից բխող հիմնավոր պատճառներ իր քաղաքացիության երկիր, իսկ քաղաքացիություն չունենալու դեպքում՝ իր նախկին բնակության երկիր վերադառնալը մերժելու վերաբերյալ:

3. Օժանդակ պաշտպանության կարգավիճակը դադարեցնում է միայն լիազոր մարմինը՝ Օրենքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 14.4. Օժանդակ պաշտպանության կարգավիճակը չեղյալ հայտարարելը

1. Օժանդակ պաշտպանության կարգավիճակը չեղյալ է հայտարարվում Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված դեպքում և կարգով այնքանով, որքանով այն իր էությամբ կիրառելի է (*mutatis mutandis*):

Հոդված 14.5. Հանդուրժվողի կարգավիճակը դադարեցնելը և չեղյալ հայտարարելը

1. Հանդուրժվողի կարգավիճակը դադարեցնելու և չեղյալ հայտարարելու նկատմամբ տարածվում են օժանդակ պաշտպանության կարգավիճակը դադարեցնելու և չեղյալ հայտարարելու՝ համապատասխանաբար Օրենքի 14.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 14.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են (*mutatis mutandis*):»:

Հոդված 19. Օրենքի 16.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ապաստան հայցողները և փախստականները ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձինք ունեն անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք

այդ կարգավիճակի դադարեցման և չեղյալ հայտարարելու ընթացակարգերի շրջանակներում:

2. Օրենքի 13-րդ հոդվածով և 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված մարմինները պարտավոր են անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի մասին սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց տեղեկացնել նրանց հասկանալի լեզվով, ինչպես նաև ապահովել այդ իրավունքի իրականացումը:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք ցանկանում են օգտվել անվճար իրավաբանական օգնության իրավունքից, համապատասխան մարմինը հանրային պաշտպան նշանակելու հարցով դիմում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին: Անձնական ազատությունից զրկված, անչափահաս կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց դեպքում համապատասխան մարմինը հանրային պաշտպան նշանակելու համար Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ պարտավոր է դիմել սեփական նախաձեռնությամբ, բացառությամբ եթե այդ անձինք արդեն իսկ օգտվում են իրավաբանական օգնությունից: Այդ անձանց իրավաբանական օգնությունից հրաժարվելը հաստատվում է գրավոր արձանագրությամբ՝ պաշտպանի ներկայությամբ:

4. Լիազոր մարմինը Օրենքով նաժատեսված կարգավիճակների դադարեցման կամ չեղյալ հայտարարման, ինչպես նաև ապաստանի դադարեցման վարույթներով օտարերկրացու ցանկության դեպքում դիմում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ հանրային պաշտպան նշանակելու համար:

5. Անչափահաս, հոգեկան առողջության խնդիր ունեցող կամ անձնական ազատությունից զրկված անձի՝ Օրենքով նախատեսված կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարման, ինչպես նաև ապաստանի դադարեցման վարույթներով լիազոր մարմինը հանրային պաշտպան նշանակելու համար Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ պարտավոր է դիմել սեփական նախաձեռնությամբ, բացառությամբ եթե այդ անձինք արդեն իսկ օգտվում

են իրավաբանական օգնությունից: Այդ անձանց իրավաբանական օգնությունից հրաժարվելը հաստատվում է գրավոր արձանագրությամբ՝ պաշտպանի ներկայությամբ:»:

Հոդված 20. Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում «ապաստան ստացած փախստականները» բառերից հետո լրացնել «և ապաստան հայցողները» բառերը:

Հոդված 21. Օրենքի 22-րդ հոդվածում «փախստականներն» բառից հետո լրացնել «ու ապաստան հայցողներն» բառերով:

Հոդված 22. Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) «բժշկական օգնություն» բառերը համապատասխանաբար փոխարինել «բժշկական (հոգեբուժական) օգնություն» բառերով.

2) 2-րդ մասում «ապաստան հայցողներն ու ապաստան չստացած փախստականներն» բառերը փոխարինել «ապաստան հայցողները, ապաստան չստացած փախստականները և հանդուժվողի կարգավիճակ ստացած անձինք» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Ի լրումն անձի հիմնական նյութական պահանջմունքների (կացարան, սնունդ, առաջին անհրաժեշտության հիգիենայի և կենցաղային պարագաներ, հագուստ, կոշիկ և այլն) բավարարման և որոշակի ազատ միջոցներ ունենալու նպատակով Օրենքի շրջանակներում լիազոր մարմնի կողմից տրամադրվող օգնությանը, հատուկ կարիք ունեցող ապաստան հայցողները ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սոցիալական աջակցության այլ համապատասխան ձևերից օտվելու իրավունք, եթե բավարարում են այդ օրենսդրության պահանջները:»:

Հոդված 23. Օրենքի 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողներին և Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ ըստ հերթականության:

2. Ժամանակավոր տեղավորման կենտրոն կարող են լինել այդ նպատակով ստեղծված հատուկ հաստատությունը, ինչպես նաև մասնավոր անձանց, կազմակերպություններին պատկանող կամ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածքները՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Այդպիսի ժամանակավոր տեղավորման կենտրոն սահմանելիս հաշվի է առնվում ապաստան հայցողների հասանելիությունը անհրաժեշտ ծառայություններին և ենթակառուցվածքներին՝ ուղղված անձի բավարար կենսամակարդակի ապահովմանը: Ժամանակավոր տեղավորման կենտրոնի կառավարումը կարող է պատվիրակվել մասնավոր իրավաբանական անձանց և հասարակական կազմակերպություններին:

3. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում սահմանափակ տեղերի դեպքում հատուկ կարիք ունեցող անձինք տեղավորվում են առաջնահերթ: Հատուկ կարիք ունեցող անձինք կարող են ընտրել տեղավորվել ժամանակավոր տեղավորման կենտրոնում կամ ստանալ դրամական օգնություն, եթե տրամադրվող ժամանակավոր տեղավորման կենտրոնը հարմարեցված չէ ապաստան հայցողի հատուկ կարիքներին:

4. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների կացարանի իրավունքն ապահովվում է Օրենքի 50-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման և դրա կառավարման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

6. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության կարգապահական կանոնները սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:

7. Ապաստանի մերժում ստացած փախստականներին լիազոր մարմինը կարող է թույլատրել շարունակել բնակությունը ժամանակավոր տեղավորման կենտրոնում, մինչև նրանք կլքեն Հայաստանի Հանրապետությունը կամ ապաստան կստանան՝ Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:»:

Հոդված 24. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Ապաստան չստացած փախստականներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար միջնակարգ կրթության իրավունք:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-6-րդ մասեր.

«3. Կրթության իրավունքի արդյունավետ իրականացման և հանրակրթական հիմնական ծրագրերում ինտեգրվելու նպատակով ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստական երեխաների համար կազմակերպվում են նախապատրաստական դասընթացներ (այդ թվում՝ լեզվի):

4. Ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստական երեխաները պետք է հնարավորինս սեղմ ժամկետում ընդգրկվեն հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում, սակայն ոչ ուշ քան ընդունելության համար դիմելու պահից սկսած երեք ամսվա ընթացքում:

5. Պարտադիր կրթությունից դուրս մնացած ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստական երեխաները ներգրավվում են պարտադիր կրթական ծրագրերում Կրթության հարցերով լիազոր մարմնի կողմից:

6. Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելության համար պահանջվող փաստաթղթերը ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստական երեխաների համար չեն պահանջվում, եթե նրանք չեն կարող ներկայացնել այդպիսի փաստաթղթեր:»:

Հոդված 25. Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ապա ՄԱԿ ՓԳՀ-ն նրան տրամադրում է նման փաստաթղթեր կամ վկայագրեր» բառերը փոխարինել «ապա այդ փաստաթղթերը կամ վկայագրերը տրամադրվում են Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի կամ համապատասխան մանդատ ունեցող միջազգային կազմակերպության կողմից» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Այն դեպքում, երբ պահանջվում է ապաստան հայցողի կամ փախստականի կողմից ներկայացված փաստաթղթերի օրինականության և գործողության ժամկետների ստուգում, լիազոր մարմինը, ապաստան հայցողի կամ փախստականի գրավոր համաձայնության առկայության դեպքում, Օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, համապատասխան երկրում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի միջոցով կարող է իրականացնել այդ ստուգումները՝ առանց քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ կապ հաստատելու:»:

Հոդված 26. Օրենքի 27-րդ հոդվածում «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված» բառերով:

Հոդված 27. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 28. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լիազոր մարմինը ապաստան հայցողին և նրա ընտանիքի անդամներին Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն ապաստանի հայց ներկայացնելուց հետո մինչև երեք աշխատանքային օրվա ընթացքում անվճար տրամադրում է անձը հաստատող վկայական: Ընտանիքի բոլոր անդամներին, այդ թվում՝ 18 տարին չլացած անձանց, տրամադրվում է անձը հաստատող առանձին վկայական:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Ապաստան հայցողների անձը հաստատող վկայականը պարունակում է արագ արձագանքման կոդ (այսուհետ՝ QR կոդ), որը հնարավորություն է տալիս ստանալ այդ վկայականի վավերականության, ինչպես նաև ապաստան հայցողի իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն:».

3) 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

4) 4-րդ մասի «հայցի մերժման վերաբերյալ վերջնական որոշումը ապաստան հայցողին ուղարկելուց մեկ շաբաթ հետո» բառերը փոխարինել «ապաստանի հայցի մերժման վերաբերյալ որոշումը վերջնական դառնալուց մեկ շաբաթ հետո» բառերով:

Հոդված 29. Օրենքի 30-րդ հոդվածի 12-րդ մասում «կամ այլ օրինական ներկայացուցչի» և «կամ օրինական ներկայացուցիչն» բառերը համապատասխանաբար փոխարինել «, այլ օրինական ներկայացուցչի կամ լիազոր մարմնի կողմից նշանակված ներկայացուցչի» և «, օրինական ներկայացուցիչը կամ լիազոր մարմնի կողմից նշանակված ներկայացուցիչն» բառերով:

Հոդված 30. Օրենքի 30.1-ին հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ մաս.

«14. Ճամփորդական փաստաթուղթ կարող է տրամադրվել նաև ապաստան հայցողին, եթե առկա են լուրջ մարդասիրական պատճառներ (առողջական, ընտանեկան և այլն) ապաստան հայցողի՝ այլ երկիր մեկնելու համար: Ճամփորդական փաստաթուղթը տրամադրվում է սույն հոդվածով սահմանված կարգով մինչև մեկ ամիս ժամկետով և կարող է երկարաձգվել նույն ժամկետով:»:

Հոդված 31. Օրենքի 30.3-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ պարբերություն.

«Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի բացակայության դեպքում վերադարձի վկայականի տրամադրումը իրականացվում է հեռավար եղանակով, որի կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ: Հեռավար տրամադրման եղանակը պետք է համապատասխանի անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին:»:

Հոդված 32. Օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի՝ հայաստանյան հասարակությունում ինտեգրումը խթանելու նպատակով Օրենքի 33-րդ, 34-րդ, 38-42-րդ հոդվածներով սահմանված լիազոր մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում պետք է իրականացնեն Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ինտեգրման ծրագրեր:»:

Հոդված 33. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝

ա) 1-ին պարբերության «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝

օտարերկրացիներ) ապաստանի տրամադրման, փախստականի ճանաչման, ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվածների իրավունքների իրացման» բառերը փոխարինել «միջազգային պաշտպանության տրամադրման, միջազգային պաշտպանություն ստացած անձանց իրավունքների իրականացման» բառերով.

բ) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմինը.».

գ) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները.».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջազգային պաշտպանության շնորհումը սույն հոդվածի 1-ին մասում թվարկված պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, և միջազգային պաշտպանության վերաբերյալ տեղեկությունները, ներառյալ այն փաստը, որ ապաստանի հայց է ներկայացվել, որևէ պարագայում չպետք է փոխանցվեն ծագման երկրի իշխանություններին կամ հետապնդող այլ սուբյեկտների:»:

Հոդված 34. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 32.1-ին հոդված.

«Հոդված 32.1. Անձնական տվյալների մշակումը

1. Ի լրումն Օրենքով նախատեսված դեպքերի՝ անձնական տվյալների փոխանցումը առանց ապաստան հայցողի, փախստականի, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձի (տվյալների սուբյեկտի) համաձայնության կարող է իրականացվել նաև սույն հոդվածով նախատեսված դեպքերում:

2. Տվյալների սուբյեկտի նկատմամբ քրեական վարույթի առկայության դեպքում քրեական վարույթ իրականացնող մարմինները լիազոր մարմինն փոխանցում են

քրեական գործի նյութերում առկա այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են լիազոր մարմնի կողմից փախստականի կարգավիճակի բացառման, բացառման դրույթների կիրառելիության հիմքով փախստականի կարգավիճակի չեղյալ հայտարարման ու ապաստանի և օժանդակ պաշտպանության կարգավիճակի դադարեցման՝ Օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման համար:

3. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը ապաստան հայցողների վերաբերյալ օտարերկրյա պետությունից ստացված հանձնման խնդրանքի մասին անհապաղ տեղեկացնում են լիազոր մարմնին՝ փոխանցելով հանձնման հետ կապված գործով փաստաթղթերի պատճենները՝ լիազոր մարմնի կողմից տվյալների սուբյեկտի ապաստանի հայցի գնահատման հետ կապված սույն Օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման նպատակով:

4. Լիազոր մարմինը ապաստան հայցողի կողմից առերևույթ հանցակազմ պարունակող արարքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման ենթարկվող ապաստան հայցողի բնակության հասցեին և դրա փոփոխությանը վերաբերող տեղեկությունները փոխանցում է քրեական վարույթ իրականացնող մարմիններին:

5. Լիազոր մարմինը Սահմանապահ զորքերին փոխանցում է ապաստան հայցողի անձը հաստատող վկայականի և դրա վավերականության ժամկետի մասին տվյալները՝ Հայաստանի Հանրապետությունում օրինական գտնվելու կամ բնակվելու կանոնների խախտումից բխող պատասխանատվության հիմքերի գնահատման նպատակով:

6. Օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների հետ համագործակցության կամ քրեական վարույթներով իրավական օգնության շրջանակներում տվյալների սուբյեկտի անձնական տվյալները փոխանցելիս Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները խորհրդակցում են լիազոր

մարմնի հետ՝ ապահովելու անձնական տվյալների պաշտպանության սկզբունքները և ծագման երկրի իշխանություններին ապաստանի հայցի մասին որևէ տեղեկատվություն չփոխանցելու՝ Օրենքով նախատեսված արգելքի պահպանումը:

7. Լիազոր մարմինը կարող է պարզել ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում միջազգային պաշտպանություն ստացած անձանց՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու փաստը, քաղաքացիական կացության գրանցումների առկայությունը, չմարված դատվածության և հետախուզման մեջ գտնվելու փաստը, վարչական իրավախախտումների փաստը և դրանց մանրամասները, սեփական կամ վարձակալած անշարժ գույքի առկայությունը, միջազգային հետախուզման մեջ գտնվելու փաստը, անցանկալի անձանց շտեմարանում ներառված լինելու փաստը, փաստաթղթերի իսկությունը, սոցիալական աջակցությունից օգտվելու տվյալները, հարկ վճարելու մասին տվյալները, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների մասին տվյալները, ազատությունից զրկված օտարերկրացիների գտնվելու վայրի մասին տվյալները՝ այնքանով, որքանով այդ տեղեկությունները անհրաժեշտ են Օրենքով սահմանված իր լիազորությունները իրականացնելու համար:

8. Անձնական տվյալների մասին հարցումները, այդ թվում՝ ինքնաշխատ եղանակով, ինչպես նաև անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի փոխանցումը կարող են կատարվել էլեկտրոնային համակարգերի միջոցով: Անձնական տվյալների մշակման էլեկտրոնային համակարգեր ստեղծելիս և վարելիս պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ տվյալների սուբյեկտի իրավունքների խախտման ռիսկերը տվյալների մշակման բոլոր փուլերում կանխելու նպատակով:»:

Հոդված 35. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հաստատում է ապաստան հայցողների, փախստականների, օժանդակ պաշտպանության կարգավիճակ և հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձանց՝ Օրենքով սահմանված անձը հաստատող և ճամփորդական փաստաթղթերի նկարագրերը և դրանց տրման կարգը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) կենսաապահովման պայմանների տրամադրման նպատակով հաստատում է ապաստան հայցողներին Օրենքով սահմանված օգնության տրամադրման եղանակը, չափը և կարգը:»:

Հոդված 36. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լիազոր մարմինը ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմին ենթակա Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունն է:».

2) 4-րդ մասում՝

ա) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետ.

«1.1) Օրենքի 16.1-ին հոդվածով սահմանված կարգով դիմում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ ապաստան հայցողի, փախստականի, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձի համար հանրային պաշտպան նշանակելու նպատակով.».».

բ) 2-րդ կետի «Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների, փախստականների, օժանդակ պաշտպանության և հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձանց» բառերով.

գ) 3.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներին, օժանդակ

«4) Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի և 14.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառելիության հարցը լուծելու նպատակով տրամադրում է պետական անվտանգության համար վտանգ ներկայացնելու մասին եզրակացություն.

5) պետական անվտանգության համար վտանգ ներկայացնելու մասին եզրակացություն տրամադրելու դեպքում Կառավարության կողմից սահմանված կարգով լիազոր մարմինն տրամադրում է այն տեղեկությունները, որոնք հիմք են հանդիսացել այդ եզրակացության համար:».

3) 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) Օրենքի 16.1-ին հոդվածով սահմանված կարգով դիմում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ ապաստան հայցողի կամ փախստականի համար հանրային պաշտպան նշանակելու նպատակով:»:

Հոդված 38. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ապահովում է Հայաստանի Հանրապետությունում միջազգային պաշտպանություն չստացած օտարերկրացիների՝ օրենքով սահմանված կարգով արտաքսումը Հայաստանի Հանրապետությունից:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) Օրենքի 16.1-ին հոդվածով սահմանված կարգով դիմում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ ապաստան հայցողի կամ փախստականի համար հանրային պաշտպան նշանակելու նպատակով:»:

Հոդված 39. Օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները վավերացնում են

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների, Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձանց ներկայացրած փաստաթղթերը և ակտերը, որոնք կազմել են իրենց հյուպատոսական տարածքների իրավասու մարմինները: Հյուպատոսական ծառայությունները նաև աջակցում են Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականի և օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձի՝ Օրենքի 54-րդ հոդվածով սահմանված կարգով ընտանիքի վերամիավորմանը:»:

Հոդված 40. Օրենքի 38-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա) 1-ին կետի «Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների» բառերից հետո լրացնել «, օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձանց» բառերը.

բ) 2-րդ կետի «լեզվի» բառից հետո լրացնել «, մասնագիտական» բառերը.

գ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-5-րդ կետեր.

«4) կրթության հարցերով լիազոր մարմինն տեղեկացնում է պարտադիր կրթությունից դուրս մնացած ապաստան հայցող, փախստական և օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած երեխաների մասին.

5) աջակցում է լիազոր մարմինն կամ այլ իրավասու մարմիններին ապաստան հայցողների հատուկ կարիքների բացահայտման, նրանց տեղավորման, համապատասխան աջակցության և խնամքի ապահովման, երեխայի լավագույն շահի գնահատման, ապաստան հայցողների կարիքների գնահատման, ինչպես նաև Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով նախատեսված մասնագետների ներգրավման հարցում:».

2) 2-րդ մասի «Խնամակալության և հոգաբարձության մարմինների և Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների

հետ» բառերը փոխարինել «Խնամակալության մարմինների ու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ» բառերով:»:

Հոդված 41. Օրենքի 39-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների» բառերից հետո լրացնել «, օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձանց» բառերը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Լիազոր մարմնի, Խնամակալության մարմինների կամ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի դիմումի հիման վրա կազմակերպում է ապաստան հայցող, փախստական և օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած երեխաների՝ ուսումնական հաստատություն ընդունման գործընթացը:»:

Հոդված 42. Օրենքի 40-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների՝» բառերը.

2) 2-րդ մասի «Առողջապահության հարցերով լիազոր մարմնի միջնորդության հիման վրա» բառերը փոխարինել «լիազոր մարմնի միջնորդության հիման վրա» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Առողջապահության հարցերով լիազոր մարմինը աջակցում է լիազոր մարմնին ապաստան հայցողների հատուկ կարիքների բացահայտման, նրանց տեղավորման, համապատասխան աջակցության և խնամքի ապահովման, ապաստան հայցողների կարիքների գնահատման, ինչպես նաև Օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ և 12-րդ մասերով նախատեսված մասնագետների ներգրավման հարցում:»:

Հոդված 43. Օրենքի 41-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 41. Խնամակալության մարմինները

1. Խնամակալության մարմինները լիազոր մարմնի, Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի կամ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջնորդության հիման վրա իրենց համայնքի տարածքում կազմակերպում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների համար խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը՝ միջնորդությունն ստանալուց հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

2. Խնամակալության մարմինները, համագործակցելով լիազոր մարմնի, Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի և Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, աջակցում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների տեղավորման և խնամքի կազմակերպման հարցում:

Հոդված 44. Օրենքի 42-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«42. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերը Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում, համագործակցելով լիազոր մարմնի, Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի և Խնամակալության մարմինների հետ աջակցում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների տեղավորման ու խնամքի կազմակերպման հարցում:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն աջակցում են մասնավոր անձանց,

կազմակերպություններին պատկանող, ինչպես նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածքները որպես ժամանակավոր տեղավորման կենտրոն կազմակերպելուն՝ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով:»:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և տեղական ինքակառավարման մարմինները կրթության հարցերով լիազոր մարմին տեղեկացնում են պարտադիր կրթությունից դուրս մնացած ապաստան հայցող, փախստական, օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած երեխաների մասին:»:

Հոդված 45. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասում «ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների» բառերը փոխարինել «ապաստան հայցողների, փախստականների, օժանդակ պաշտպանության և հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձանց» բառերով:

Հոդված 46. Օրենքի 45-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 45. Ապաստանի տրամադրման վարույթը

1. Օրենքի իմաստով ապաստանի տրամադրման վարույթ է համարվում լիազոր մարմնի կողմից ապաստանի հայցի հիման վրա իրականացվող վարչական վարույթը, որն ուղղված է օտարերկրացուն փախստականի, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակի տրամադրմանը, ինչպես նաև Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված սկզբունքի կիրառելիության արձանագրմանը ապաստան հայցողի ծագման երկիրը չհանդիսացող երկրի նկատմամբ:

2. Փախստականի, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակի տրամադրումը լիազոր մարմնի կողմից քննարկվում է մեկ միասնական վարույթի շրջանակներում՝ սույն մասում նշված հերթականությամբ: Նույն վարույթի շրջանակներում լիազոր մարմինը գնահատում է նաև Օրենքի 9-րդ

հոդվածի 3-րդ մասով սահմանված սկզբունքի կիրառելիությունը ապաստան հայցողի ծագման երկիրը չհանդիսացող երկրի նկատմամբ և կատարում համապատասխան արձանագրում:

3. Լիազոր մարմինը քննարկում է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված հաջորդ հերթի կարգավիճակը, եթե անձը չի բավարարել նախորդ հերթի կարգավիճակի՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

4. Ապաստանի տրամադրման վարույթը կարող է իրականացվել Օրենքով սահմանված ընդհանուր կամ արագացված ընթացակարգերով:

5. Ապաստանի տրամադրման վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքին համապատասխան, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ:

6. Ապաստանի դիմումը լիազոր մարմինը քննարկում է դիմումը լիազոր մարմնում գրանցվելուց հետո՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված արագացված ընթացակարգերի կիրառման դեպքի: Լիազոր մարմնի պատճառաբանված որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 60 աշխատանքային օր, եթե առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված՝ վարչական վարույթի ժամկետի երկարաձգման հիմքեր, բացառությամբ Օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված անձանց վերաբերյալ վարույթի:»:

Հոդված 47. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «օտարերկրյա քաղաքացիներ» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «օտարերկրացիներ» բառով, 58-րդ հոդվածի 3-րդ մասում «օտարերկրյա քաղաքացին» բառերը փոխարինել «օտարերկրացին» բառով:

Հոդված 48. Օրենքի 46-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Նշված մարմինները անհրաժեշտության դեպքում ապաստան հայցողին տրամադրում են անվճար թարգմանիչ:».

2) 2-րդ մասի «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-3-րդ մասերում» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածում» բառերով.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապաստանի խնդրանքն արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում պաշտպանություն գտնելու ցանկությունը: Ապաստանի խնդրանքը նաև ներառում է անձի և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալները:».

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մարմինները հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ՝ անհրաժեշտ տեղեկությունները, ներառյալ՝ ապաստանի խնդրանքի, նրա և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալների, ինչպես նաև ծագման երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության մանրամասները ստանալու համար և ապաստանի խնդրանքը գրանցում են համապատասխան գրանցամատյանում: Ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցելու կարգը, ինչպես նաև գրանցամատյանի ձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ: Հարցազրույցը գրավոր արձանագրվում է ապաստանի խնդրանք ստացած մարմինների կողմից, ապա գրավոր ներկայացված ապաստանի խնդրանքի հետ, եթե այդպիսին առկա է, փոխանցվում է լիազոր մարմնին, իսկ պատճենները մնում են վերը նշված մարմինների մոտ: Ազատագրկման վայրի վարչակազմը ապաստանի խնդրանքի հետ միասին լիազոր մարմնին է փոխանցում նաև ապաստան հայցողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լուսանկարը:».

5) 5-րդ մասում «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-3-րդ մասերով սահմանված» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված» բառերով.

6) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ապաստան հայցողի և Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված նրա ընտանիքի անդամների՝ վավեր ճամփորդական փաստաթուղթ կամ մուտքի վավեր թույլտվություն չունենալու դեպքում Սահմանապահ զորքերը կարող են ընդունել պատճառաբանված գրավոր որոշում նրանց՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ կացարանում մինչև 72 ժամ տևողությամբ պահելու մասին՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում.

1) անհրաժեշտ է պարզել անձանց ինքնությունը, ինչպես նաև սկզբնական անվտանգության միջոցառումներ իրականացնել.

2) հանրային առողջությունը և պետական անվտանգությունը պաշտպանելու նպատակով:».

7) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1- 6.4-րդ մասեր.

«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն անձանց պահումը պետք է լինի անհրաժեշտ, պիտանի և չափավոր: Պահման սահմանված ժամկետը լրանալուց հետո նրանք պետք է տեղափոխվեն Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամանակավոր տեղավորման կենտրոն, եթե ունեն կացարանի կարիք:

6.2. Սահմանապահ զորքերի պատճառաբանված գրավոր որոշումը տրամադրվում է ապաստան հայցողին իր համար հասկանալի լեզվով: Որոշումը պետք է ներառի տեղեկություններ այն բողոքարկելու ընթացակարգերի մասին:

6.3. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողները կարող են պահվել միայն իրենց հատուկ կարիքներին հարմարեցված և համապատասխան պայմաններ ապահովող հատուկ կացարանում: Երեխաների պահումը հատուկ կացարանում թույլատրվում է միայն որպես բացառիկ միջոց՝ Օրենքի 50.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված երեխայի լավագույն շահի գնահատում իրականացնելու արդյունքում:

6.4. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հատուկ կացարանում պահելու պայմանները պետք է համապատասխանեն ձևավորված միջազգային չափանիշներին:».

8) 8-րդ մասի առաջին նախադասությունում «Ապաստան հայցողի» բառերից առաջ ավելացնել «Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխայի, հաշմանդամություն ունեցող կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող» բառերը:

Հոդված 49. Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 2.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1. Այն օտարերկրացին, ում նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է քրեական հետապնդում, կամ ով ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է ապաստանի դիմում ներկայացնել այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում: Իրավասու մարմնի պաշտոնատար անձը սույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստանի դիմում ներկայացնելու նրա իրավունքը, որի վերաբերյալ տալիս է նրա համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցագիր և ապահովում է այդ իրավունքի իրականացումը՝ նրա ապաստանի դիմումը փոխանցելով լիազոր մարմնին: Ապաստանի դիմում ներկայացնելու ժամկետի բացթողումը կարող է հարգելի համարվել բացառիկ դեպքերում, եթե անձը ժամկետը բաց է թողել ֆորսմաժորային դեպքերի, հիվանդության կամ այլ՝ իր կամքից անկախ պատճառներով, որոնք հարգելի են ճանաչվում լիազոր մարմնի կողմից: Եթե ապաստանի դիմում ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո առաջացել են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին առնչվող նոր հանգամանքներ,

օտարերկրացին կարող է ապաստանի դիմում ներկայացնել նոր հանգամանքների մասին տեղեկանալուց հետո 15 օրվա ընթացքում:».

2) 3-րդ մասից հանել «՝ սույն օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով՝ վերջինիս համար սահմանված լիազորության իրականացումն ապահովելու նպատակով» բառերը.

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ապաստան հայցող ընտանիքի դեպքում ապաստանի հայցը կարող է ներկայացվել անհատական դիմումով կամ Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ընտանիքի որևէ անդամի կողմից ամբողջ ընտանիքի համար ներկայացվող միասնական դիմումով: Ընտանիքի այլ անդամի ներկայացրած դիմումում ներառվելու վերաբերյալ համաձայնությունը գրանցում է լիազոր մարմինը և այն հաստատվում է համապատասխան ապաստան հայցողի ստորագրությամբ:».

4) 6-րդ մասում «որոնց հետևանքով նա լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը» բառերից հետո լրացնել «կամ չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ այնտեղ» բառերը.

5) 8-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 50. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 47.1-ին հոդվածով.

«Հոդված 47.1. Ապաստանի դիմում ներկայացնելու համար այցելության գրանցումը

1. Ապաստանի դիմում ներկայացնելու համար օտարերկրացին կարող է լիազոր մարմին այցելության օրը և ժամը ընտրել էլեկտրոնային համակարգի միջոցով՝ նշելով իր համար հասկանալի լեզուն: Լիազոր մարմինը ապահովում է համապատասխան լեզվի թարգմանչի ներկայությունը գրանցված այցելության համար, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում հեռակապի միջոցով: Էլեկտրոնային համակարգը պետք է գործարկվի անձնական տվյալների պաշտպանության սկզբունքներին համահունչ»:

Հոդված 51. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 47.2-րդ հոդվածով.

«Հոդված 47.2. Ապաստանի խնդրանքի ներկայացումը հավաստող փաստաթուղթը

1. Լիազոր մարմնի կողմից ապաստանի դիմումի հաշվառումը անհապաղ կազմակերպելու անհնարինության դեպքում լիազոր մարմինը ապաստանի խնդրանք ներկայացրած անձին տրամադրում է տեղեկանք, որով հաստատվում է անձի կողմից ապաստանի խնդրանք ներկայացնելու փաստը, ինչպես նաև ապաստանի դիմումի հաշվառման համար լիազոր մարմին ներկայանալու ամսաթիվը և ժամը: Տեղեկանքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողի օրինական գտնվելը հավաստող փաստաթուղթ:

2. Տեղեկանքը պարունակում է հետևյալ տվյալները.

- 1) անուն, ազգանուն, հայրանուն,
 - 2) ծննդյան ամսաթիվը,
 - 3) քաղաքացիությունը կամ նախկին մշտական բնակության պետությունը (ծագման երկիր),
 - 4) սեռը,
 - 5) տեղեկանքի սերիան,
 - 6) տրամադրման ամսաթիվը և վավերականության ժամկետը (ապաստանի դիմումի հաշվառման համար լիազոր մարմին ներկայանալու ամսաթիվը և ժամը),
 - 7) լիազոր մարմնի անվանումը,
 - 8) նշում, որ տվյալները հիմնված են անձի ներկայացրած տեղեկատվության հիման վրա,
 - 9) QR կոդը, որը տեղեկատվություն է պարունակում տեղեկանքի և ապաստան հայցողի իրավունքների վերաբերյալ:
3. Տեղեկանքի ձևը հաստատում է լիազոր մարմինը:
4. Տեղեկանքի հասցեատերը՝

1) վերադարձնում է տեղեկանքը ապաստանի դիմումը հաշվառելու և ապաստան հայցողի անձը հաստատող վկայականի տրամադրման կամ տեղեկանքում առկա տվյալների անճշտության կամ փոփոխության դեպքում.

2) հայտնում է տեղեկանքի կորստի մասին, իսկ այն հայտնաբերելու դեպքում ներկայացնում է լիազոր մարմին:»:

Հոդված 52. Օրենքի 48-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «օրենքի 7-րդ հոդվածի 1-3-րդ մասերով» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածով» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Ապաստանի դիմումը հաշվառելիս ապաստան հայցողը լուսանկարվում է լիազոր մարմնում և անհատական տվյալների տեղեկատվական բազաներում անձի նույնականացումն ապահովելու նպատակով հանձնում է աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները: Աջ և ձախ ձեռքերի ցուցամատների մատնադրոշմները ստանալը ֆիզիոլոգիապես անհնարին լինելու դեպքում վերցվում են աջ և ձախ ձեռքերի որևէ մատի մատնադրոշմները, իսկ դրանք ստանալու անհնարինության դեպքում կատարվում է համապատասխան նշում լիազոր մարմնի կողմից վարվող անհատական տվյալների էլեկտրոնային բազայում: Երեխաների մատնադրոշմները վերցվում են 6 տարեկանից, իսկ լուսանկարը՝ անկախ տարիքից:».

3) 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ մասեր.

«3.1. Եթե ապաստանի դիմումը հաջորդում է ապաստանի խնդրանքին, լիազոր մարմինը ապաստանի դիմումը հաշվառում է ապաստանի խնդրանքը ներկայացվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապաստանի խնդրանքը ներկայացվել է Օրենքով սահմանված այլ իրավասու մարմնին, լիազոր մարմինը ապահովում է ապաստանի դիմումի հաշվառումը խնդրանքը ներկայացնելուց հետո ոչ ուշ, քան վեց

աշխատանքային օրվա ընթացքում: Սույն մասով սահմանված ժամկետները կարող են երկարաձգվել մինչև առավելագույնը տասը աշխատանքային օր, եթե սահմանված ժամկետների պահպանումը օբյեկտիվ պատճառներով անհնար է:

3.2. Ապաստանի դիմումը հաշվառելիս անհատական գործում նշվում են նաև ապաստան հայցողի հատուկ կարիքները՝ այդ կարիքների բավարարմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու և, անհրաժեշտության դեպքում, գործի առաջնահերթ քննություն ապահովելու համար:».

5) 4-րդ մասից հանել «, ինչպես նաև սույն օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հարցազրույցի անցկացման մասին ծանուցագիր» բառերը:

Հոդված 53. Օրենքի 49-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն ապաստանի դիմումն ընդունելիս, հաշվառելիս և համապատասխան գործ կազմելիս լիազոր մարմինը ապաստան հայցողին անվճար խորհրդատվություն է տրամադրում նրա իրավունքների և պարտականությունների, պարտականությունը չկատարելու հետևանքների մասին, ինչպես նաև փախստականի կարգավիճակ, օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակ ստանալու համար Օրենքով սահմանված հիմքերի, ապաստանի դիմումի քննարկման, վարույթի ժամկետների, ընթացակարգերի, էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ փաստաթղթերի ներկայացման, ծանուցումների, այցելությունների ամրագրման հնարավորությունների, ապաստանի հայցից հրաժարվելու հետևանքների վերաբերյալ:

2. Ապաստան հայցողը տեղեկացվում է նաև անվճար իրավաբանական օգնության, սեփական միջոցներով փաստաբան վարձելու, իր փաստաբանի ներկայությամբ հարցազրույցի մասնակցելու, ինչպես նաև Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն՝ հարցազրույցի ընթացքում թարգմանչի, իսկ ապաստան հայցողի ցանկության դեպքում՝ իր նախընտրած սեռի թարգմանչի ծառայությունից անվճար

օգտվելու իր իրավունքի մասին: Ապաստան հայցողին հիշեցվում է նաև ցանկացած պահի ՄԱԿ ՓԳՀ-ի հետ կապ հաստատելու նրա իրավունքի մասին:

3. Ապաստան հայցողը տեղեկացվում է Օրենքի 3-րդ գլխով սահմանված մարմինների հետ նրա համագործակցելու պարտավորության մասին, մասնավորապես ապաստան հայցողը պարտավորվում է՝

1) տրամադրել բանավոր և գրավոր անհրաժեշտ և լիարժեք տեղեկատվություն.

2) պահպանել լիազոր մարմինն տեղեկացնելու պաշտոնապես ընդունված վերջնաժամկետները և կարգերը.

3) լիազոր մարմինն ներկայացնել ապաստանի տրամադրման վարույթի համար անհրաժեշտ տեղեկություններ պարունակող իր ունեցած բոլոր փաստաթղթերը.

4) իր հայտնած տեղեկությունների, այդ թվում՝ իր հասցեի որևէ փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել լիազոր մարմին.

5) լիազոր մարմինն նախապես տեղեկացնել Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու մտադրության մասին՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու պատճառների և ժամկետի մասին տեղեկություններ.

6) այցելության, ապաստանի դիմումի հաշվառման կամ հարցազրույցի համար նախատեսված ժամկետում ներկայանալ լիազոր մարմին, իսկ չներկայանալու դեպքում լիազոր մարմինն ներկայացնել չներկայանալու հիմնավորումները:

4. Լիազոր մարմինը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունները չպահպանելու հետևանքների, ներառյալ՝ լիազոր մարմնի հետ ոչ պատշաճ համագործակցության, առանց նախապես զգուշացնելու Հայաստանի Հանրապետության տարածքը լքելու, իր հայտնած տեղեկությունների, իր հասցեի որևէ փոփոխության մասին լիազոր մարմնին անմիջապես հայտնելու պարտականության, ապաստանի դիմումը կասեցնելու և կարճելու հիմքերի, մասնավորապես՝ գործի վերաբացման կամ նոր դիմում ներկայացնելու

հնարավորությունների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը ապաստան հայցողին տրամադրում է գրավոր ձևով՝ իր համար հասկանալի լեզվով: Տեղեկություններին իրազեկված լինելը հավաստվում է ապաստան հայցողի ստորագրությամբ, իսկ եթե ապաստան հայցողը հրաժարվում է ստորագրել, դրա մասին նշում է կատարվում իրազեկման փաստաթղթի վրա:

5. Ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ իրականացվում է առանձին խորհրդատվություն: Լիազոր մարմինը ապաստանի միասնական դիմում ներկայացնող անձի ընտանիքի չափահաս անդամներին խորհրդապահական կարգով տեղեկացնում է միասնական դիմում ներկայացնելու հետևանքների և անհատական դիմում ներկայացնելու նրանց իրավունքի մասին:

6. Ապաստան հայցողին պարտադիր տեղեկատվությունը տրամադրվում է պարզ և նրա համար հասկանալի եղանակով: Հատուկ կարիք ունեցող ապաստան հայցողներին խորհրդատվությունը տրամադրվում է ապաստան հայցողի հատուկ կարիքներին համապատասխան՝ հաշվի առնելով նրա տարիքը, հասունությունը և սեռը:

7. Ապաստան հայցողին խորհրդատվություն տրամադրելիս լիազոր մարմինը կարող է թարգմանիչ ներգրավել հեռավար եղանակով»:

Հոդված 54. Օրենքի 50-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Ապաստանի դիմումի գրանցման պահից սկսած՝» բառերը փոխարինել «Ապաստանի հայցի ներկայացման պահից սկսած, ինչպես նաև ապաստանի տրամադրման վարույթի ամբողջ ընթացքում» բառերով.

2) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Լիազոր մարմնի կողմից ներկայացուցիչ նշանակելիս նշանակման ենթակա ներկայացուցչի վերաբերյալ երեխայի կարծիքը հաշվի է առնվում՝ երեխայի տարիքին և հասունությանը համապատասխան:».

3) 4-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Լիազոր մարմինը երեխայի ծնողների կամ այլ ազգականների հայտնաբերման և վերամիավորման համար համագործակցում է երեխայի պաշտպանության ոլորտում լիազոր մարմինների՝ այդ թվում՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի, Խնամակալության մարմինների, համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության և հյուպատոսական հիմնարկի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ՝ տեղեկատվություն հավաքագրելու համար՝ հաշվի առնելով երեխայի կարծիքը, լավագույն շահը և վերջինիս վերաբերյալ նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների կամ հետապնդող այլ սուբյեկտների հետ տեղեկություններ փոխանակելու արգելքը:».

4) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողները կարող են տեղավորվել միայն երեխաների համար նախատեսված կամ երեխաների համար առանձնացված և համապատասխան պայմաններ ունեցող ժամանակավոր տեղավորման կենտրոնում: Հաշվի առնելով սույն մասի դրույթները՝ եթե որևէ ժամանակավոր տեղավորման կենտրոնում երեխային տեղավորելը նպատակահարմար չէ, ապա լիազոր մարմնի միջնորդության հիման վրա Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմինը, անհրաժեշտության դեպքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և Խնամակալության մարմինների հետ համատեղ, անմիջապես նախաձեռնում է երեխային տեղավորելու գործընթացը՝ խորհրդակցելով նրա ներկայացուցչի հետ:».

5) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Սույն հոդվածի 3-րդ և 9-րդ մասերով նախատեսված ներկայացուցիչները պետք է ունենան հատուկ կարիք ունեցող անձանց հետ աշխատելու անհրաժեշտ գիտելիք ու հմտություններ: Ներկայացուցիչը իր ստորագրությամբ հավաստում է ապաստան հայցողի անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու

պարտականությունը: Ներկայացուցիչ նշանակելու կարգն ու պայմանները սահմանվում են Կառավարության որոշմամբ: Եթե մինչև սույն մասով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից ներկայացուցչի նշանակումը առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխայի համար նշանակվել է խնամակալ (հոգաբարձու), ապա վերջինս հանդիսանում է ապաստանի ընթացակարգում երեխայի ներկայացուցիչը:».

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ և 14-րդ մասեր.

«13. Տեղաշարժման դժվարություններ ունեցող հատուկ կարիքներով ապաստան հայցողներին անձը հաստատող փաստաթղթերը տրամադրվում են առձեռն՝ նրանց բնակության վայր այց կատարելու միջոցով:

14. Հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներն ունեն անվճար հոգեբանական աջակցություն ստանալու իրավունք: Լիազոր մարմինը, անհրաժեշտության դեպքում Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմնի հետ համատեղ կամ օրենքով չարգելված այլ միջոցներով իրականացվող ծրագրերի շրջանակներում, կազմակերպում է այդ անձանց հոգեբանական աջակցությունը ապաստանի ընթացակարգի հնարավորինս վաղ փուլում: Խոշտանգման կամ բռնության այլ ձևերի ենթարկված կամ այլ կերպ տրավմա վերապրած անձանց հոգեբանական աջակցությունը կազմակերպվում է նախքան Օրենքի 51-րդ հոդվածի համաձայն անցկացվող հարցազրույցը»:

Հոդված 55. Օրենքում լրացնել հետևյալ բովանդակությամբ 50.1-ին հոդված.

«Հոդված 50.1. Երեխայի լավագույն շահի գնահատումը

1. Երեխայի լավագույն շահը ապաստանի տրամադրման վարույթի ցանկացած փուլում պետք է հաշվի առնվի, որի վերաբերյալ նշում է կատարվում երեխայի վերաբերյալ կայացված որոշման մեջ:

2. Երեխայի լավագույն շահը գնահատելիս հաշվի են առնվում երեխայի կարծիքը, ազգային ծագումը, կրոնը և համոզմունքները, մշակութային ինքնությունը,

խառնվածքի առանձնահատկությունը, հայացքներն ու նախասիրությունները, տարիքը և հասունությունը, հոգեբանական ու մտավոր զարգացման մակարդակը, ընտանեկան միջավայրի և հարաբերությունների պահպանումը (ընտանիքի միասնության պահպանման և վերամիավորման հնարավորությունը), երեխայի խնամքը, պաշտպանությունը և անվտանգությունը, երեխայի խոցելիությունը (հատուկ կարիքը), առողջության և կրթության իրավունքը և այլն: Բոլոր դեպքերում երեխայի լավագույն շահի գնահատումը պետք է ուղղված լինի երեխայի իրավունքների ամբողջական և արդյունավետ իրականացմանը և երեխայի ամբողջական զարգացմանը:

3. Առանձին դեպքերում, երբ առկա են երեխայի անվտանգության համար սպառնալիք հանդիսացող գործոններ, ինչպես նաև երեխային առնչվող՝ հատուկ կարևորության այլ հարցերի որոշման համար, իրականացվում է երեխայի լավագույն շահի առանձին գնահատում անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ ունեցող աշխատակցի կողմից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան փորձագետների ներգրավմամբ, որի վերաբերյալ կազմվում է եզրակացություն:»:

Հոդված 56. Օրենքի 51-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի՝

ա) երկրորդ նախադասությունում «չափահաս անդամներն ունեն հարցազրույցի իրավունք» բառերից հետո լրացնել «, իսկ անչափահաս անդամների հետ հարցազրույց իրականացվում է, եթե դա բխում է երեխայի լավագույն շահից՝ համաձայն Օրենքի 50.1-ին հոդվածի, ինչպես նաև գործով պատշաճ քննություն իրականացնելու անհրաժեշտությունից: Երեխայի հետ հարցազրույցը իրականացվում է նրա տարիքին և հասունության մակարդակին համապատասխան եղանակով:»:

բ) վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Լիազոր մարմինը կարող է միջազգային պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշում կայացնել առանց հարցազրույցի, եթե տվյալ գործում առկա են

բավարար տեղեկություններ այդպիսի որոշում կայացնելու համար, այդ թվում՝ այնպիսի իրավիճակում, երբ ապաստան հայցողն ի վիճակի չէ կամ չի կարող մասնակցել հարցազրույցին իր կամքից անկախ պատճառներով, որոնք տևական բնույթի են:».

2) 2-րդ մասում լրացնել նախադասություն.

«Հարցազրույցի մասին ծանուցումները ապաստան հայցողին կարող են ուղարկվել նաև Օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ապաստան հայցողի հետ հարցազրույցն անցկացնում է լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատակիցը:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1 - 3.3-րդ մասեր.

«3.1. Ապաստան հայցողի հետ հարցազրույցը ձայնագրվում է և կազմվում է հարցազրույցի ամփոփ արձանագրությունը, որը ներառում է ապաստանի հայցի հիմքում ընկած էական փաստական հանգամանքների ամփոփ շարադրանքը: Լիազոր մարմինը որոշումը կայացնելուց առնվազն երկու շաբաթ առաջ ապաստան հայցողին տրամադրում է արձանագրության և հարցազրույցի ձայնագրության մեկ օրինակը, միաժամանակ ապահովում է, որ արձանագրության բովանդակությունը գրավոր կամ բանավոր թարգմանության միջոցով ամբողջովին հասանելի լինի ապաստան հայցողին: Ապաստան հայցողը արձանագրությանը ծանոթանալուց հետո դրա վերաբերյալ կարող է ներկայացնել բացատրություններ, առաջարկություններ կամ առարկություններ, ինչպես նաև դրանում կատարել լրացումներ: Ապաստան հայցողը ստորագրությամբ հաստատում է արձանագրության բովանդակությունը: Եթե ապաստան հայցողը հրաժարվում է կամ ի վիճակի չէ ստորագրելու արձանագրությունը, ապա չստորագրման պատճառները պետք է գրավոր արձանագրվեն և կցվեն հարցազրույցի արձանագրությանը: Լիազորագրով, որը պետք է կազմված լինի հայերեն և ապաստան հայցողին հասկանալի լեզվով և

ստորագրվի ապաստան հայցողի կողմից լիազոր մարմնի համապատասխան աշխատակցի ներկայությամբ, համապատասխան լիազորության առկայության դեպքում արձանագրության և հարցազրույցի ձայնագրության մեկ օրինակը կարող է տրամադրվել միայն ապաստան հայցողի փաստաբանին, ով կարող է առաջարկել արձանագրության մեջ կատարել ուղղումներ կամ լրացումներ: Այս դեպքում արձանագրության ստորագրումը ապաստան հայցողի կողմից պարտադիր չէ:

3.2. Հարցազրույցի արձանագրությունը և ձայնագրությունը կազմում են ապաստան հայցողի անհատական գործի անբաժանելի մասը:

5) 4-րդ մասի «մինչև ապաստան հայցողի հետ հարցազրույց անցկացնելը ապաստան հայցողին» բառերը փոխարինել «ապաստան հայցողի հետ հարցազրույցի ընթացքում նրան» բառերով.

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ: Թարգմանիչը կարող է մասնակցել հարցազրույցին հեռահաղորդակցության միջոցներով, եթե թարգմանչի ֆիզիկական ներկայությունը ապահովելը անհնար է՝ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան մասնագետի բացակայության պատճառով:»:

Հոդված 57. Օրենքի 52-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշում» բառերը փոխարինել «ապաստանի հայցի վերաբերյալ որոշում» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Լիազոր մարմինը որոշում է կայացնում՝ հիմնվելով անհատական գործում եղած տեղեկությունների ու ապացույցների, ինչպես նաև ծագման երկրի մասին առկա տեղեկությունների հիման վրա, որոնք պետք է լինեն ստույգ, արդի, օբյեկտիվ և տարբեր վստահելի աղբյուրներից ձեռք բերված:».

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Լիազոր մարմինը առաջնահերթ ուսումնասիրում է օտարերկրացուն փախստականի կարգավիճակի և ապաստանի տրամադրման հիմքերը: Լիազոր մարմինը կարող է մերժել փախստականին ապաստանի տրամադրումը միայն Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում՝ գնահատելով նաև Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը: Փախստականին ապաստանի տրամադրումը պետական անվտանգությանը լուրջ վտանգ սպառնալու հիմքով կարող է մերժվել, եթե առկա է ողջամիտ կապ Հայաստանի Հանրապետության տարածքից փախստականի հեռացման և վտանգի վերացման միջև, հարկադիր հեռացումը հանդիսանում է փախստականի հեռացման միակ հնարավոր միջոցը, և պետական անվտանգությանը սպառնացող վտանգը իր լրջությամբ գերակայում է փախստականին սպառնացող վտանգի նկատմամբ: Փախստականի կարգավիճակի հիմքերին չբավարարելու դեպքում լիազոր մարմինը քննարկում է Օրենքի 1.1-ին գլխով սահմանված օժանդակ պաշտպանության և հանդուրժվողի կարգավիճակի տրամադրումը:».

4) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղը համարվում է հաստատված, եթե օտարերկրացու ծագման երկրում առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հետևանքներն առաջանալու ողջամիտ հնարավորություն:».

5) 8-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 58. Օրենքի 52.1-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետ.

«3) ակնհայտ հիմնավոր են:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.2-րդ մաս.

«2.2. Ապաստանի հայցը համարվում է ակնհայտ հիմնավոր, եթե ապաստան հայցողի համապատասխանությունը փախստականի սահմանման չափորոշիչներին անմիջականորեն բխում է առկա տվյալներից և այլ հանգամանքներ պարզելու անհրաժեշտությունը բացակայում է:».

3) 3-րդ մասի «սույն հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը» բառերով.

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգը կարող է կիրառվել հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողների նկատմամբ, եթե դա բխում է հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողների շահերից՝ առաջնահերթություն տալով նրանց ապաստանի հայցի վերաբերյալ որոշումների կայացմանը:»:

Հոդված 59. Օրենքի 53-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «սույն օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով կամ 10-րդ կամ 11-րդ կամ 12-րդ հոդվածներով սահմանված՝ դադարեցնելու կամ չեղյալ հայտարարելու հիմքերից որևէ մեկը,» բառերը փոխարինել «փախստականի կարգավիճակը դադարեցնելու կամ չեղյալ հայտարարելու կամ ապաստանը դադարեցնելու հիմք,» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասեր.

«2.1. Պետական անվտանգության համար վտանգ ներկայացնելու մասին եզրակացության մեջ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների առկայության դեպքում լիազոր մարմինը ապաստան հայցողին կամ միջազգային պաշտպանություն ստացած անձին և նրա փաստաբանին տրամադրում է Ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի կողմից ներկայացված՝ պետական գաղտնիք հանդիսացող տեղեկատվության վերաբերյալ այն ընդհանրական նկարագրությունը, որի հիման վրա Ազգային անվտանգության հարցերով լիազոր

մարմինը հանգել է անձի՝ պետական անվտանգության համար վտանգ ներկայացնելու վերաբերյալ եզրակացության՝ այնքանով, որքանով դա չի վնասի պաշտպանվող հանրային շահը կամ այլ անձանց անվտանգությունը և հնարավորություն է տալիս ապաստան հայցողին կամ միջազգային պաշտպանություն ստացած անձին իրականացնել իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ապաստան հայցողին տրամադրվող տեղեկությունները չպետք է ներառեն իրականացված միջոցառումների, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ համագործակցող և համագործակցած անձանց, ներառյալ՝ վկաների մասին տեղեկությունները:

2.2. Լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացած անձի կարգավիճակը դադարեցնելու կամ չեղյալ հայտարարելու կամ ապաստանը դադարեցնելու մասին որոշում կայացնելիս պետք է գնահատի Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը, իսկ պետական անվտանգությանը լուրջ վտանգ սպառնալու հիմքով որոշումը կարող է ընդունվել, եթե առկա է ողջամիտ կապ Հայաստանի Հանրապետության տարածքից փախստականի հեռացման և վտանգի վերացման միջև, հարկադիր հեռացումը հանդիսանում է փախստականի հեռացման միակ հնարավոր միջոցը, և պետական անվտանգությանը սպառնացող վտանգը իր լրջությամբ գերակայում է փախստականին սպառնացող վտանգի նկատմամբ:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Սույն հոդվածի դրույթները այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են (*mutatis mutandis*), տարածվում են օժանդակ պաշտպանության ու հանդուրժվողի կարգավիճակի դադարեցման և չեղյալ հայտարարելու, ինչպես նաև ապաստանի տրամադրումը մերժելու ընթացակարգերի նկատմամբ:»:

Հոդված 60. Օրենքի 54-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում թվարկված» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածով սահմանված» բառերով.

2) 2-րդ մասի 2-րդ պարբերությունում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Սույն պարբերությամբ սահմանված դեպքում ընտանիքի վերամիավորման դիմումը լիազոր մարմին կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով:».

3) 3-րդ մասի «սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի» բառերը փոխարինել «Օրենքի 7-րդ հոդվածի» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն. «Անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը կարող է հարցազրույց անցկացնել ապաստան ստացած փախստականի ընտանիքի անդամների հետ:».

4) 4-րդ մասի «և 53-րդ հոդվածի 5-րդ մասերով» բառերը փոխարինել «և 7-րդ հոդվածով» բառերով, ինչպես նաև «տրամադրում է Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու թույլտվություն (այսուհետ՝ վիզա)» բառերից հետո լրացնել «, իսկ վավեր ճամփորդական փաստաթղթի բացակայության դեպքում, անհրաժեշտության դեպքում, լիազոր մարմինը 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ» բառերը:

Հոդված 61. Օրենքի 55-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 55. Ապաստանի տրամադրման վարույթի կարճումը, կասեցումը և վերսկսումը

1. Լիազոր մարմինը կարճում է ապաստանի տրամադրման վարույթը, եթե

1) ապաստան հայցողը գրավոր հրաժարվում է լիազոր մարմնին իր ներկայացրած ապաստանի հայցից.

2) լրացել են սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետները, և մինչև այդ ժամկետների ավարտը վարույթի վերսկսման դիմում չի ներկայացվել.

3) գոյություն ունի միևնույն ապաստան հայցողի միևնույն հիմքերով ապաստանի հայցի վերաբերյալ ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

2. Լիազոր մարմինը կասեցնում է ապաստանի տրամադրման վարույթը, եթե՝

1) ապաստան հայցողը Օրենքի 51-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն չի ներկայացնում անհրաժեշտ տեղեկատվությունը կամ չի ներկայանում հարցազրույցի՝ Օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ծանուցագրի համաձայն և մեկ ամսվա ընթացքում չի ներկայացնում հարցազրույցին չներկայանալու հիմնավոր պատճառները, կամ այլ կերպ հրաժարվում է համագործակցել լիազոր մարմնի հետ՝ ապաստանի հայցի վերաբերյալ որոշում կայացնելու հարցում.

2) առանց լիազոր մարմնին նախապես տեղեկացնելու ապաստան հայցողը լքել է Հայաստանի Հանրապետության տարածքը.

3) ապաստան հայցողի հիվանդության պատճառով հնարավոր չէ իրականացնել վարույթը.

4) հնարավոր չէ ապահովել թարգմանչի ներկայությունը, բայց ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով:

3. Ապաստան հայցողը իրավունք ունի դիմում ներկայացնել կասեցված վարույթը վերսկսելու համար՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքում՝ կասեցման պահից ինը ամսվա ընթացքում, սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ կասեցման պահից մեկ ամսվա ընթացքում, սույն հոդվածի 2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում՝ կասեցման պատճառը վերանալու պահից մեկ ամսվա ընթացքում:

4. Կասեցված վարույթը շարունակվում է վարույթը կասեցնելու պահից:»:

Հոդված 62. Օրենքի 56-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 56. Ծանուցումների իրականացման կարգը

1. Ապաստան հայցողներին ծանուցումներն իրականացվում են հետևյալ եղանակով՝

- 1) առձեռն հանձնմամբ.
- 2) հատուկ կապի ծառայության միջոցով.
- 3) էլեկտրոնային համակարգով՝ ապաստան հայցողի կողմից այդ եղանակն ընտրելու դեպքում:

2. Ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող կամ ազատությունից զրկված ապաստան հայցողներին ծանուցումները կարող են իրականացվել համապատասխանաբար ժամանակավոր տեղավորման կենտրոնի կամ անազատության վայրի վարչակազմի միջոցով:

3. Ապաստան հայցողի կողմից իր փաստաբանին ծանուցելու վերաբերյալ դիմում ներկայացվելու կամ լիազորագրում նման լիազորության առկայության դեպքում ծանուցվում է միայն կամ նաև նրա փաստաբանը: Ապաստան հայցողի փաստաբանին ծանուցումներն իրականացվում են էլեկտրոնային համակարգով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ծանուցման մյուս ձևերով:

4. Լիազոր մարմնի ընդունած բոլոր որոշումները, ներառյալ՝ ապաստանի ընթացակարգի կասեցման և կարճման մասին որոշումները, ապաստան հայցողին հանձնվում են որոշման կայացման օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված ապաստանի հայցերով կայացված որոշման դեպքում՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը: Ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող կամ ազատությունից զրկված ապաստան հայցողներին լիազոր մարմնի որոշումները կարող են հանձնվել համապատասխանաբար ժամանակավոր տեղավորման կենտրոնի կամ անազատության վայրի վարչակազմի միջոցով:

5. Լիազոր մարմնի որոշումներն ուժի մեջ են մտնում ապաստան հայցողի կամ նրա փաստաբանի կողմից որոշումը ստանալու հաջորդ օրը:

6. Ապաստան հայցողը պարտավոր է լիազոր մարմնին հայտնել իր հասցեի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթղթերն

ուղարկվում են նրա վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված ուղարկելուն հաջորդող հինգերորդ օրը:

7. Էլեկտրոնային համակարգի միջոցով ծանուցվելու դեպքում ապաստան հայցողը կամ փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված, եթե առկա է ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստում: Եթե բացակայում է ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը, ապա ապաստան հայցողը կամ փաստաբանը համարվում են պատշաճ ծանուցված ծանուցումն էլեկտրոնային համակարգում տեղադրելուն հաջորդող հինգերորդ օրը: Ծանուցման առկայության վերաբերյալ ապաստան հայցողը և փաստաբանը ստանում են հաղորդագրություն, եթե լիազոր մարմնին տրամադրել են իրենց կոնտակտային տվյալները:

8. Առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված երեխա ապաստան հայցողի դեպքում ծանուցվում են նաև նրա ներկայացուցիչը և փաստաբանը:

9. Բոլոր ծանուցագրերը, ինչպես նաև որոշումների պատճառաբանական և եզրափակիչ մասերը ապաստան հայցողին պետք է տրամադրվեն նրան հասկանալի լեզվով: Որոշման եզրափակիչ մասը բովանդակում է ծանուցում ապաստան հայցողի հետագա գործողությունների մասին. դրական որոշման դեպքում ներառում է տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում նրա հետագա կացության հարցերը կարգավորող օրենսդրության մասին, իսկ բացասականի դեպքում՝ անհրաժեշտ տեղեկություններ որոշումը բողոքարկելու մասին:»:

Հոդված 63. Օրենքի 57-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «30 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «երկու ասմվա ընթացքում» բառերով.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Օրենքով սահմանված բողոքարկման ժամկետի ավարտից հետո լիազոր մարմնի կայացրած որոշումը դառնում է վերջնական: Բողոքարկման ժամկետը

հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում ժամկետի վերականգնման կարգը սահմանվում է Վարչական դատավարության օրենսգրքով:

3) 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 64. Օրենքի 58-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն.

«Օժանդակ պաշտպանության կարգավիճակ ստացած անձանց անձը հաստատող փաստաթուղթը և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը տրամադրվում է սույն մասով սահմանված ժամկետներում:»

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով փախստականին Հայաստանի Հանրապետությունում տրամադրված ապաստանը դադարեցվելու կամ 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով ապաստանի տրամադրումը մերժվելու դեպքում, և եթե կիրառելի չէ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չվերադարձելիության սկզբունքը, լիազոր մարմինը, համագործակցելով միջազգային կազմակերպությունների և արտաքին գործերի հարցերով լիազոր մարմնի հետ, աջակցում է փախստականին հնարավոր երրորդ երկրներ մուտք գործելու համար անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթերի և վիզայի ստացման հարցում, այդ թվում՝ փախստականին տրամադրում է ճամփորդական փաստաթուղթ երկրի տարածքը լքելու համար, եթե փախստականը չունի վավեր ճամփորդական փաստաթուղթ և չի կարող այն ձեռք բերել իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրից: Ճամփորդական փաստաթղթի ձևը և տրամադրման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:».

3) 2-րդ մասում «11-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «11.1-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 65. Օրենքի 60-րդ հոդվածի 5-րդ մասում «55-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերը փոխարինել «55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերով:

Հոդված 66. Օրենքի 61-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված պատճառների հետևանքով լքել են իրենց, համապատասխանաբար, քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության պետության տարածքները և հայտնվել են Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում» բառերը փոխարինել «6-րդ հոդվածի 1-ին մասում նշված պատճառների հետևանքով չեն կարող վերադառնալ իրենց, համապատասխանաբար, քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության պետության տարածքները» բառերով:

Հոդված 67. Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության ազգային» բառերը փոխարինել «պետական» բառով:

Հոդված 68.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն օրենքով սահմանված այն դրույթները, որոնք պահանջում են էլեկտրոնային համակարգերի գործարկում, ուժի մեջ են մտնում այդ համակարգերը գործարկման մեջ դնելու հաջորդ օրվանից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված վարույթների նկատմամբ տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործողության մեջ եղած կարգավորումները: Այն անձանց, ում նկատմամբ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառվել է Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրամադրվում է համապատասխանաբար օժանդակ պաշտպանության կամ հանդուրժվողի կարգավիճակ՝ նրանց դիմումի հիման վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը շարունակում են գործել այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են (*mutatis mutandis*):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի հունիսի 30-ի Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 113-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մաս.

«2.1. Ձերբակալված օտարերկրյա քաղաքացին և քաղաքացիություն չունեցող անձն իրավունք ունի իր համար հասկանալի լեզվով վարույթն իրականացնող մարմնի կողմից տեղեկատվություն ստանալ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին, ինչպես նաև ստանալ անվճար իրավաբանական օգնություն տեսակցության կամ, անհրաժեշտության դեպքում, տեսակապի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին և «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածներով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 193-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) քրեական օրենսգրքի 457-րդ և 469-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներով վարույթների դեպքում օտարերկրյա քաղաքացի կամ

քաղաքացիություն չունեցող անձի կողմից ապաստանի հայց է ներկայացվել՝ մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն հոդվածի գործողությունը չի տարածվում անչափահաս ապաստան հայցողների վրա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ ՀՕ-154-Ն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում «ինչպես նաև Հայաստանի

Հանրապետությունում փախստականի» բառերից հետո լրացնել «և ապաստան հայցողի» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 41-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի «քրեական վարույթներով նախաքննության ընթացքում, » բառերից առաջ լրացնել «ապաստանի գործերով վարչական վարույթում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին ապաստան հայցելու դեպքում,» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ մասեր.

«3.1. Ապաստանի գործերով անվճար իրավաբանական օգնությունը ապահովվում է հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին հոդվածով սահմանված իրավասու մարմինների դիմումի հիման վրա:

3.2. Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու դեպքում օտարերկրացիներին անվճար իրավաբանական օգնությունը ապահովվում է հանրային պաշտպանի գրասենյակի

միջոցով՝ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կամ դատարանի դիմումի հիման վրա:».

3) 5-րդ մասի՝

ա) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) «Հայաստանի Հանրապետությունում հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձանց՝ այդ կարգավիճակի դադարեցման և չեղյալ հայտարարելու ընթացակարգերում.».

բ) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերում օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին.».

գ) 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18) օտարերկրացիներին՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու վերաբերյալ որոշումը, ինչպես նաև արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար:»:

Հոդված 2. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասում՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին հոդվածով սահմանված իրավասու մարմինների դիմումի կամ որոշման հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու և գործը հանրային պաշտպանին կամ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանին հանձնելու մասին: Սույն կետով նախատեսված դեպքում հանրային պաշտպանություն իրականացնելու մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ տվյալների կամ հիմքերի վերաբերյալ տեղեկատվության բացակայության դեպքում հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է

պահանջել ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը՝ միաժամանակ ապահովելով անձի հանրային պաշտպանությունը: Նման պահանջի դեպքում համապատասխան մարմինը պարտավոր է եռօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ կետ.

«12) ապահովում է ապաստան հայցողին, փախստականին և հանդուրժվողի կարգավիճակ ստացած անձին հանրային պաշտպանություն տրամադրելիս անվճար հիմունքներով թարգմանչի ներգրավումը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՈՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանապահ զորքերի մասին» 2001 թվականի նոյեմբերի 20-ի թիվ ՀՕ-266 օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ ժ) կետ.

«ժ) Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին իրենց համար հասկանալի լեզվով տեղեկատվություն տրամադրել այն անձանց, ում մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք չի թույլատրվել, ինչպես նաև դիմել այդ անձանց և ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար և ապահովել այդ իրավունքի

իրականացումը տեսակցության կամ, անհրաժեշտության դեպքում, տեսակապի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1 և «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածներով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օտարերկրացիների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն.

«Հայաստանի Հանրապետության տարածք օտարերկրացիների մուտքը չթույլատրելու վերաբերյալ կայացվում է գրավոր որոշում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.4-րդ մաս.

«3.4. Հայաստանի Հանրապետության տարածք օտարերկրացիների մուտքը չթույլատրվելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով, ինչը կասեցնում է օտարերկրացու վերադարձը:»:

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Ժամանակավոր կացության կարգավիճակ տրվում է նաև այն օտարերկրացուն, ում նկատմամբ կիրառելի են սույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված արտաքսումն արգելող հանգամանքները:»:

Հոդված 3. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածով նախատեսված դրույթները չեն տարածվում կացության կարգավիճակ տալու՝ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հիմքերի վրա:»:

Հոդված 4. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի դ) կետի «հասարակական կարգին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հիմքերով տրված կացության կարգավիճակի» բառերը:

Հոդված 5. Օրենքի 32-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.
2) 2-րդ մասի առաջին կետի «բնակվում են Հայաստանի Հանրապետությունում կամ» բառերից հետո լրացնել «արտաքսումը չի բխում նրա լավագույն շահից, ներառյալ՝ երբ նրա ծագման երկրում առկա է երեխայի իրավունքների խախտման կամ անվերականգնելի վնասի ենթարկվելու վտանգ կամ» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Մարդասիրական հիմքով օտարերկրացու արտաքսումը կարող է արգելվել, եթե առկա է կյանքին վտանգ սպառնացող կամ ծանր հիվանդություն, և վերադարձը իր ծագման երկիր կարող է իրական վտանգ ստեղծել օտարերկրացու համար՝ էականորեն նվազեցնելով կյանքի տևողությունը կամ հանգեցնելով առողջական

վիճակի լուրջ, արագ և անդառնալի անկման, ուժեղ ցավերի, ներառյալ՝ երբ համապատասխան բժշկական օգնությունը հասանելի չէ ծագման երկրում:»:

Հոդված 6. Օրենքի 33-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն.

«Օտարերկրացին ունի անվճար իրավաբանական օգնության իրավունք, որի իրականացումը ապահովվում է միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի կամ դատարանի կողմից՝ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 7. Օրենքի 39-րդ հոդվածում «- իրեն հասկանալի լեզվով կամ թարգմանչի միջոցով իմանալ իր ձերբակալման և պահման պատճառների մասին,» բառերից հետո լրացնել «-իր համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին, ինչպես նաև ստանալ անվճար իրավաբանական օգնություն տեսակցության կամ, անհրաժեշտության դեպքում, տեսակապի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին և «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածներով սահմանված կարգով,» բառերը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» 1995 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-16 օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Սույն հոդվածի իմաստով օրինական բնակություն չի համարվում «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված հանդուրժվողի կարգավիճակի հիմքով բնակությունը Հայաստանի Հանրապետությունում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2022 թվականի հունիսի 15-ի Քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ կետ.

«18) իր համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին,

ինչպես նաև ստանալ անվճար իրավաբանական օգնություն տեսակցության կամ, անհրաժեշտության դեպքում, տեսակապի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին և «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածներով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի թիվ ՀՕ-305-Ն օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ երկրորդ նախադասություն.

«Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի իր համար հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին, ինչպես նաև ստանալ անվճար իրավաբանական օգնություն տեսակցության կամ, անհրաժեշտության դեպքում, տեսակապի միջոցով՝ «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 16.1-ին և «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածներով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 31.6-րդ գլուխը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ V.2 բաժին.

«ԲԱԺԻՆ V.2

ԱՊԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 31.11

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ

ԱՆՁԱՆՑ ԱՊԱՍՏԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ

ՈՐՈՇ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 222.36. Գործի քննության ընդհանուր ընթացակարգը

1. Ապաստանի կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու որոշումների բողոքարկման գործերով, Հայաստանի

Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցողների պահման և պահման պայմանների դեմ ուղղված հայցերով, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ներկայացված ապաստանի հայցի հիման վրա հարուցված ապաստանի տրամադրման վարույթի արդյունքում լիազոր մարմնի կայացրած միջամտող կամ զուգորդվող վարչական ակտը և ապաստան հայցողի կենսաապահովման պայմանները տրամադրելու, փոխարինելու, նվազեցնելու կամ դադարեցնելու մասին վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերով վարչական դատավարությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

Հոդված 222.37. Դատարան դիմելու և գործի քննության ժամկետները

1. Ապաստանի հայց ներկայացրած օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն վարչական դատարան դիմում ներկայացնել ապաստանի հայցի հիման վրա հարուցված ապաստանի տրամադրման վարույթի արդյունքում լիազոր մարմնի կայացրած միջամտող կամ զուգորդվող վարչական ակտի դեմ կամ պահանջել ընդունել այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժել է լիազոր մարմինը՝ դրա մասին իրազեկվելու օրվանից սկսած՝ 2 ամսվա ընթացքում, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդման ենթարկվող կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ իրազեկվելու օրվանից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Ապաստանի կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու որոշումների դեմ վարչական դատարան դիմում կարող է ներկայացվել Հայաստանի Հանրապետություն մուտքը չթույլատրելու պահից սկսած՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցողների պահման և պահման պայմանների դեմ ապաստան հայցողի կողմից վարչական դատարան դիմում կարող է ներկայացվել իրենց իրավունքների ենթադրյալ խախտման պահից սկսած՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Պատասխանողը դիմումի պատասխան կարող է ներկայացնել դիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշումն ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Պատասխանողը պարտավոր է նույն ժամկետում վարչական դատարան ներկայացնել վարչական վարույթի բոլոր նյութերը:

5. Վարչական դատարանը գործը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 6-ամսյա ժամկետում, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերով նախատեսված դեպքերի: Գործի քննության ժամկետը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև 6 ամիս ժամկետով:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդման ենթարկվող կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի, կամ այն անձի, ում ապաստանի հայցը քննվել է «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի 52.1-ին հոդվածով նախատեսված արագացված ընթացակարգով, ինչպես նաև ապաստանի տրամադրման վարույթը կասեցնելու, կարճելու, ապաստանի դիմումը առանց քննության թողնելու մասին լիազոր մարմնի որոշումների դեմ գործերով վարչական դատարանը գործը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնում է դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 1-ամսյա ժամկետում: Գործի քննության ժամկետը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև 1 ամիս ժամկետով:

7. Լիազոր մարմնի կողմից ապաստան հայցողի կենսաապահովման պայմանները տրամադրելու, փոխարինելու, նվազեցնելու կամ դադարեցնելու մասին

գործերով վարչական դատարանը գործը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 20-օրյա ժամկետում:

8. Ապաստանի կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու որոշումների բողոքարկման գործերով վարչական դատարանը գործը քննում և ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 5-օրյա ժամկետում:

9. Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցողների պահման և պահման պայմանների դեմ բողոքարկման գործերով վարչական դատարանը գործը քննում և ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 24 ժամվա ընթացքում: Վարչական դատարանի դատական ակտը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

10. Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը: Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 15 օր հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով, իսկ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 5 օր հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

11. Վարչական դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ եթե դա հնարավոր չէ՝ հնարավորինս սեղմ ժամկետում, սակայն ոչ

ուշ, քան բողոք բերելու ժամկետը լրանալու օրվան հաջորդող 3-օրյա ժամկետում, պարտավոր է գործն ուղարկել վերաքննիչ դատարան:

12. Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքը վերադարձնելու կամ ընդունումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում վերաքննիչ բողոք բերելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում վերաքննիչ դատարանը կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, իսկ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ ոչ ուշ, քան 1-օրյա ժամկետում:

13. Դատավարության մասնակիցը վերաքննիչ դատարանի՝ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո վերաքննիչ բողոքի պատասխան կարող է ներկայացնել 10-օրյա ժամկետում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ բերված բողոքով, իսկ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ 1-օրյա ժամկետում:

14. Վերաքննիչ դատարանը գործը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 4-ամսյա ժամկետում: Գործի քննության ժամկետը դատարանի պատճառաբանված որոշմամբ կարող է երկարաձգվել մինչև 4 ամիս ժամկետով:

15. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում վերաքննիչ դատարանը գործը քննում և գործն ըստ էության լուծող դատական ակտ է կայացնում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 1-ամսյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ 24 ժամվա ընթացքում, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

16. Վերաքննիչ դատարանը միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքները քննում և որոշում է կայացնում գործը ստանալուց հետո՝ 5-օրյա

ժամկետում, իսկ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում՝ գործը ստանալուց հետո՝ 1-օրյա ժամկետում:

17. Վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից 15-օրյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից 5 օր հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով: Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդման ենթարկվող կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց գործերով վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելը չի կասեցնում այդ ակտի կատարումը, ինչը չի զրկում դատավարության կողմին դատական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ վճռաբեկ դատարան միջնորդություն ներկայացնելու իրավունքից: Միջնորդությունը վճռաբեկ դատարանը քննարկում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման հետ միասին:

18. Վերաքննիչ դատարանը բողոքի պատճենը ստանալու օրվանից ոչ ուշ, քան հաջորդ օրը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ սեղմ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան բողոք բերելու ժամկետը լրանալու օրվան հաջորդող 3-օրյա ժամկետում, պարտավոր է գործը ուղարկել վճռաբեկ դատարան:

19. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալուց հետո 15-օրյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ 7-օրյա ժամկետում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին բերվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև 5-օրյա ժամկետ՝ սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին

բերելու համար, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ 2-օրյա ժամկետ:

20. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու օրվանից 1 ամսվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ 10-օրյա ժամկետում: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ուղարկվում է բողոք բերող անձին և գործին մասնակցող անձանց այն կայացնելու պահից 3-օրյա ժամկետում:

21. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ 10-օրյա ժամկետում:

22. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում դատավարության մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու վճռաբեկ բողոքի պատասխան վճռաբեկ բողոքի պատճենն ստանալու օրվանից մինչև վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուն հաջորդող 3-րդ օրը:

23. Վճռաբեկ դատարանը գործը քննում և որոշում է կայացնում սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված ժամկետներում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելուն հաջորդող 10-օրյա ժամկետում:

24. Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոքը քննում և որոշում է կայացնում գործը ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, իսկ սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերում՝ գործը ստանալուց հետո՝ 2-օրյա ժամկետում:

25. Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքի քննության արդյունքում կայացրած որոշումն ուղարկվում է բողոք բերած անձին, դատավարության այլ

մասնակիցներին և համապատասխան դատարան՝ այն կայացնելու օրվանից 3-օրյա ժամկետում:

26. Անձնական ազատության իրավունքը սահմանափակված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում սույն հոդվածով նախատեսված բողոքարկման ժամկետները սկսում են հոսել այդ անձանց կողմից փաստաբանի հետ տեսակցելու և նրան համապատասխան լիազորություն տալու պահից:

Հոդված 222.38. Ապացուցման չափանիշը

1. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի հայտարարությունները համարվում են արժանահավատ, եթե ներկայացված տեղեկությունները բավականաչափ մանրամասն են և ողջամիտ, ինչպես նաև չեն հակասում գործին առնչվող առկա հատուկ և ընդհանուր տեղեկատվությանը:

2. Ձեռք բերված բոլոր ապացույցների հետազոտումից հետո բարենպաստ վարչական ակտի ընդունումը հիմնավորող որևէ կոնկրետ փաստի առկայության կամ բացակայության վիճելի մնալու դեպքում այդ փաստի առնչությամբ չփարատված կասկածները մեկնաբանվում են հոգուտ օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի, եթե նրա պատմությունը ընդհանուր առմամբ արժանահավատ է՝ համաձայն սույն հոդվածի 1-ին մասի:

3. Հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղը համարվում է հաստատված, եթե առկա է ողջամիտ հնարավորություն, որ իր ծագման երկրում օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կարող է ենթարկվել մարդու հիմնարար իրավունքների լուրջ խախտման:

Հոդված 222.39. Խորհրդատվական կարծիքի տրամադրումը (amicus curiae)

1. Գործի քննության ժամանակ դրա առնչությամբ խորհրդատվական բնույթի կարծիք տրամադրելու նպատակով դատարանը կարող է իր նախաձեռնությամբ կամ կողմերի միջնորդությամբ դիմել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կառույցների, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Խորհրդատվական բնույթի կարծիքը տրամադրվում է գրավոր: Խորհրդատվական բնույթի կարծիքը կարող է տրամադրվել նաև նշված կառույցների կամ Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությամբ: Դատարանը կարող է հաշվի առնել տրամադրված խորհրդատվական բնույթի կարծիքը:

Հոդված 222.40. Ծագման երկրի մասին տեղեկություններին առնչվող ապացույցների հետազոտման առանձնահատկությունները

1. Դատավարության մասնակիցների կամ դատարանի կողմից ստույգ, արդի, տարբեր վստահելի և օբյեկտիվ աղբյուրներից ձեռք բերված ծագման երկրի մասին առկա տեղեկությունների վերաբերյալ մեջբերումների և հղումների թարգմանությունը համարվում է պատշաճ, եթե մեջբերվող նյութերը հանրամատչելի են, և դատավարության կողմը չի վիճարկում թարգմանության պատշաճությունը:

Հոդված 222.41. Երրորդ անձանց ներգրավումը

1. Վարչական դատարանը կարող է դատավարությանը ներգրավել ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմինն՝ որպես երրորդ անձ, եթե այդ մարմնի կողմից «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, 11-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 14.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում տրամադրվել է պետական անվտանգության համար վտանգ ներկայացնելու վերաբերյալ եզրակացություն:

Հոդված 222.42. Դատարանում ներկայացուցչի մասնակցության հիմքերը և պայմանները

1. Փաստաբանը կամ ներկայացուցիչը (այսուհետ՝ պաշտպան) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի պաշտպանությունն իրականացնում է՝

1) դատավարության կողմ հանդիսացող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի հրավերով.

2) դատարանի գրավոր պահանջի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելով:

2. Դատարանը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից պահանջում է պաշտպան նշանակել, եթե օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձը չունի պաշտպան, և նրա համաձայնությունն առկա է:

3. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատից կողմից նշանակվելու դեպքում պաշտպանը սույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերից բացի ներկայացնում է նաև պաշտպան նշանակվելու մասին իրավասու մարմնի որոշումը:»:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների նկատմամբ տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործողության մեջ եղած կարգավորումները:

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի 26-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու հետ կապված ծառայությունների համար պետական տուրքի վճարումից ազատվում են այն անձինք, ում նկատմամբ հաստատվել է արտաքսումն արգելող հանգամանքի կիրառելիությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ԶԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան և դրան կից 1967 թվականի արձանագրությունը (այսուհետ միասին՝ 1951թ. կոնվենցիա): Հայաստանը մասնակից է նաև ապաստան

հայցողների և փախստականների պաշտպանությանը վերաբերող մարդու իրավունքների մի շարք փաստաթղթերի: «Փախստականների և ապաստանի մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք) ընդունվել է 2008 թվականին, իսկ 2015 թվականին ենթարկվել է էական փոփոխությունների՝ ուղղված միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը: Փախստականների պաշտպանության ազգային իրավական դաշտը ներառում է նաև «Օտարերկրացիների մասին» օրենքը, Քրեական օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգիրքը, Քրեակատարողական օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը, «Սահմանապահ զորքերի մասին» օրենքը, «Փաստաբանության մասին» օրենքը և մի շարք այլ իրավական ակտեր այնքանով, որքանով դրանց կարգավորումները տարածվում են ապաստան հայցողների և փախստականների վրա:

Հայաստանը պարտավորվել է մշտապես կատարելագործել իր միջազգային պաշտպանության համակարգը, այդ թվում՝ Փախստականների հարցերով համաշխարհային ֆորումի (Global Refugee Forum) և Եվրոպական միության ու Հայաստանի Հանրապետության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) պարտավորությունների շրջանակներում: CEPA-ի 14(2)(բ) հոդվածով կողմերը պայմանավորվել են համագործակցել միջազգային պաշտպանության ոլորտում ազգային օրենսդրության և պրակտիկայի զարգացման ուղղությամբ՝ 1951թ. կոնվենցիայի և այլ վերաբերելի միջազգային փաստաթղթերի (ինչպես, օրինակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան) դրույթների և չվերադարձելիության սկզբունքի երաշխավորման նպատակով:

Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված 2021-2026թթ. ծրագրի 4.2 կետում թվարկված առաջնահերթությունների ցանկում ներառված է նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունման մեխանիզմների կատարելագործումը: Կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 801-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի 19-րդ կետով նույնպես ընդգծված է միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը:

Չնայած միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործման ուղղությամբ տարվող համակարգային աշխատանքներին՝ ապաստան հայցողների թվի ավելացմամբ և ծագման երկրների բազմազանությամբ պայմանավորված, մի շարք խնդիրներ մնացել են չլուծված: Դրանք տարաբնույթ են և պահանջում են համապարփակ լուծումներ՝ մի կողմից ամրապնդելու պաշտպանության և ընթացակարգային երաշխիքները, մյուս կողմից համակարգը դարձնելու առավել արդյունավետ, հարմարվող և դիմակայուն: Օրենսդրական բացերի և թերի լուծումների հետևանքով միջազգային պաշտպանության մեխանիզմները որոշ դեպքերում լիարժեք չեն գործում՝ պաշտպանությունից կամ իրավական, սոցիալական ապահովումից դուրս թողնելով որոշ խմբերին, ինչպես նաև հնարավորություն չտալով կիրառել մշտապես փոփոխվող մարտահրավերներին արդյունավետ արձագանքող կառուցակարգեր:

Միջազգային պաշտպանության ոլորտում խնդիրների համապարփակ ուսումնասիրության և համակարգային լուծումների մշակման նպատակով իրականացվել են լայնածավալ հետազոտական աշխատանքներ: 2013 թվականից ի վեր «Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում որակի ապահովման նախաձեռնություն» (QIEE) ծրագրի շրջանակում ապաստանի ոլորտում պետական լիազոր մարմինը և ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԱԿ ՓԳՀ), որն իր մանդատի համաձայն աջակցում է Հայաստանի ապաստանի համակարգի բարելավմանը, համատեղ իրականացրել են միջազգային պաշտպանության բնագավառի օրենսդրության և պրակտիկայի մոնիթորինգ և վերլուծություն: 2022 թվականին մեկնարկել է Եվրոպական միության կողմից համաֆինանսավորվող և ՄԱԿ ՓԳՀ-ի ու Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից իրականացվող *«Միգրացիայի կառավարման կարողությունների հզորացում՝ ի աջակցություն Կառավարության՝ CEPA-ին համահունչ բարեփոխումների օրակարգի»* ծրագիրը (Ծրագիր), որի բաղադրիչներից մեկը միջազգային պաշտպանության ոլորտում իրավական կարգավորումների համապարփակ վերանայման հարցում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տեխնիկական և փորձագիտական աջակցությունն էր՝ այն փախստականների իրավունքի և մարդու իրավունքների ոլորտի չափանիշներին առավել համապատասխանեցնելու նպատակով: Ծրագրի շրջանակում օրենսդրության փոփոխությունների մշակմանը խորհրդատվական աջակցություն տրամադրելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել են դատական, վարչական մարմինների, միջազգային

և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպումների ընթացքում վեր են հանվել միջազգային պաշտպանության ոլորտի օրենսդրական բացերն ու խնդիրները, ներկայացվել են դրանք լուծելուն ուղղված առաջարկություններ: Ծրագրի շրջանակում իրականացվել է նաև «Ապաստան հայցողների համար իրավաբանական օգնության հասանելիությունը Հայաստանում» թեմայով հետազոտություն, որի արդյունքում նույնպես առաջարկվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Իրականացվել է գործող օրենսդրական կարգավորումների համեմատություն բազմազան աղբյուրների հետ, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, միջազգային պաշտպանության մասին ՄԱԿ ՓԳՀ ուղեցույցները և մեկնաբանությունները, Եվրոպական միության հրահանգները և անդամ պետությունների փորձը: Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջին համահունչ՝ օրենսդրական կարգավորումների վերլուծության աշխատանքները ներառել են նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: ՄԱԿ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), օրինակ, Հայաստանի վերաբերյալ 2023թ.-ի եզրափակիչ դիտարկումներում, ի թիվս այլնի, անդրադարձել է ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովման խնդիրներին: Փախստականների մեծ հոսքի և մարդասիրական իրավիճակի փոփոխության հետ կապված մարտահրավերները գիտակցելով հանդերձ՝ Կոմիտեն մտահոգություն է հայտնել որոշ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կապակցությամբ, մասնավորապես՝ պատշաճ բնակարանների, առողջապահական ծառայությունների, կրթության և այլ իրավունքների անբավարար հասանելիությամբ, ի թիվս այլոց, ապաստան հայցողների և փախստականների շրջանում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների և տարեցների հատուկ կարիքները բավարարելու համար ձեռնարկվող ոչ

պատշաճ միջոցներով:¹ ՄԱԿ Երեխայի իրավունքների կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր 2024թ.-ի եզրափակիչ դիտարկումներում ողջունելով Օրենքի 2015 թվականի փոփոխությունները և Քրեական և Քրեական դատավարության օրենսգրքերում 2022 թվականի փոփոխությունները, որոնք ուժեղացրել են ապաստան հայցողների և փախստականների պաշտպանությունը անկանոն մուտքի և կեղծ փաստաթղթերի օգտագործման համար քրեական հետապնդման համատեքստում և ի գիտություն ընդունելով փախստականների պատշաճ բնակարանային, առողջապահական ծառայությունների, կրթության և այլ հիմնական ծառայությունների անբավարար հասանելիության, ինչպես նաև ապաստան հայցողների և փախստականների շրջանում աղքատության բարձր մակարդակի մասին հաղորդումները, խորհուրդ է տվել Հայաստանի Հանրապետության իշխանություններին, թիվս այլնի, ակտիվացնել ջանքերը փախստականներին և ապաստան հայցողներին պատշաճ բնակարանով, բժշկական սպասարկմամբ, կրթությամբ և այլ հիմնական ծառայություններով ապահովելու, ապաստանի վարույթում պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնության հասանելիությունը, հատկապես՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների համար, ապահովելու համար: Առաջարկություններ են ներկայացվել առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների ներկայացուցիչների և խնամակալների ներգրավման ընթացակարգերի արդյունավետությունը բարձրացնելու, ներգաղթով պայմանավորված՝ երեխաներին ազատությունից զրկելու արգելքը երաշխավորելու, ապաստանի ընթացակարգերը երեխայի լավագույն շահին համապատասխանեցնելուն ուղղված ջանքերը շարունակելու ուղղությամբ:² ՄԱԿ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2017թ.-ի եզրափակիչ դիտարկումներում արձանագրել է ապաստան հայցողներին և փախստականներին անկանոն

¹ Concluding observations on the fourth periodic report of Armenia, E/C.12/ARM/CO/4, 14 November 2023, կետ 23, <https://documents.un.org/doc/undoc/gen/g23/218/38/pdf/g2321838.pdf>:

² Concluding observations on the combined fifth and sixth periodic reports of Armenia, CRC/C/ARM/CO/5-6, 14 October 2024, կետ 40, <https://documents.un.org/doc/undoc/gen/g24/176/62/pdf/g2417662.pdf>:

սահմանահատման համար պատժի չենթարկելու սկզբունքի իրականացումը պրակտիկայում ապահովելու և այդ հիմքով կալանավորումը բացառելու անհրաժեշտությունը:³

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները, առաջարկվող կարգավորումների բնույթը

Թեև 2015 թվականի օրենսդրական փոփոխություններից հետո միջազգային պաշտպանության ոլորտում գրանցվել է իրավունքների պաշտպանության և արդյունավետ կառավարման համակարգերի էական բարելավում, տվյալ բնագավառում իրականացված հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ համաշխարհային և տարածաշրջանային նոր մարտահրավերները ի հայտ են բերել տվյալ ոլորտի օրենսդրական դաշտը համապարփակ բարեփոխելու պահանջարկ: Միջազգային պաշտպանության բնագավառում արձանագրվել են, մասնավորապես, հետևյալ հիմնական օրենսդրական խնդիրները և առաջարկվել հետևյալ լուծումները.

Միջազգային պաշտպանության ձևերը և հիմնական հասկացությունները

2.1. Ինչպես 1951թ. կոնվենցիայով, այնպես էլ մարդու իրավունքների միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համահունչ՝ Օրենքը ամրագրում է չվերադարձելիության սկզբունքը, սակայն չի կարգավորում այն անձանց

³ Concluding observations on the fourth periodic report of Armenia, CAT/C/ARM/CO/4, 26 January 2017, <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPpRiCAqhKb7yhsiz2h%2FRs7Wsu8%2FeBy9Sh53xzTb9oMILhzi1Cvt3D8bP6U7WVa87PjauSC1TjtSIIe02YXxTMp6xfpRxPnqE0GKV1e17IrsW51%2FoHNw%2BFpy3F>:

իրավական վիճակի և փաստաթղթավորման հետ կապված հարցերը, որոնք չեն բավարարում փախստականի կարգավիճակին ներկայացվող պահանջներին կամ համապատասխանում են փախստականի կարգավիճակի բացառման հիմքերին, սակայն օգտվում են մարդու իրավունքների միջազգային իրավունքից բխող չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից և չեն կարող հարկադիր հեռացվել Հայաստանի Հանրապետության տարածքից: Առաջարկվող կարգավորումները հստակեցնում են միջազգային պաշտպանության ձևերը՝ ներառելով օտարերկրացիներին, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակին ներկայացվող պահանջներին, սակայն օգտվում են չվերադարձելիության սկզբունքից (օժանդակ պաշտպանություն), և ովքեր համապատասխանում են փախստականի կարգավիճակի բացառման հիմքերին կամ ապաստան չեն ստանում պետական անվտանգությանը սպառնալու պատճառով, սակայն չեն կարող հարկադիր հեռացվել՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքից բխող չվերադարձելիության սկզբունքին համապատասխան (հանդուրժվողի կարգավիճակ):

2.2. Օրենքում առկա է որոշ հիմնական հասկացությունների անհստակություն կամ խրթինություն, մասնավորապես՝ գործածվող հիմնական հասկացությունները («միջազգային պաշտպանություն», «փախստական», «ապաստան», «հիմնավոր երկյուղ», «հետապնդում», «չվերադարձելիություն» և այլն) լիարժեք բացահայտված չեն կամ առավել հստակեցման կարիք ունեն՝ պրակտիկայում դրանց մեկնաբանման և կիրառման դժվարություններից խուսափելու համար: Օրենքով սահմանված չէ ապաստան հայցողի ծագման երկրում ներքին տեղափոխման այլընտրանքի առկայությունը՝ որպես հետապնդման հիմնավոր երկյուղը բացառող հանգամանք: Առաջարկվող կարգավորումները պարզաբանում են փախստականի բնորոշման որոշ տարրերը, մասնավորապես՝ բնորոշում են ներքին տեղափոխման այլընտրանքը, որի առկայության դեպքում ապաստան հայցողը չունի հետապնդման հիմնավոր երկյուղ, բացահայտում են 1951թ. կոնվենցիայի իմաստով «հետապնդում», «հիմնավոր երկյուղ» հասկացությունները, հստակեցնում են չվերադարձելիության սկզբունքի կիրառելիությունը պետական սահմանին և անձին ոչ իր ծագման երկիր վերադարձնելիս, համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով փախստականի կարգավիճակի

տրամադրման հիմքում սահմանում են իր քաղաքացիության երկիր կամ իր նախկին մշտական բնակության երկիր վերադառնալու անկարողությունը, այլ ոչ թե այն նշված պատճառներով լքած լինելը:

2.3. Ապաստանի տրամադրումը մերժելու հիմքերը հստակեցման կարիք ունեն: Առաջարկվող կարգավորումները որոշակիացնում են ապաստանի մերժման հիմքերը, մասնավորապես՝ բացահայտում են «երրորդ ապահով երկրի» բնորոշման կարևոր հանգամանքները, հստակեցնում են, որ այլ պետությունների կողմից ճանաչված փախստականներին ապաստանի տրամադրումը կարող է մերժվել երրորդ ապահով երկիր հասկացության կիրառելիության դեպքում, ինչպես նաև հստակեցնում են ապաստանի տրամադրման վարույթում 1951թ. կոնվենցիայով սահմանված՝ չվերադարձելիության սկզբունքից բացառությունների (պետական անվտանգության համար լուրջ վտանգ ներկայացնելը կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով այնպիսի առանձնապես լուրջ հանցագործության համար դատապարտված լինելը, որի պատճառով առկա է վտանգ հասարակության համար) իրավական հետևանքները:

2.4. Չվերադարձելիության սկզբունքը չկիրառելու հիմքերը հստակեցման կարիք ունեն, մասնավորապես, ապաստանը դադարեցնելու հիմքերի ձևակերպումը՝ «ազգային անվտանգություն» և «առանձնապես ծանր հանցագործություն», «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն» եզրույթների գործածմամբ, խնդրահարույց են և կարող են անհարկի ընդլայնել այն արարքների շրջանակը, որոնց դեպքում կարող են կիրառվել տվյալ նորմերով սահմանված իրավական հետևանքները: Առաջարկվող կարգավորումներով «ազգային անվտանգություն» եզրույթը փոխարինվել է «պետական անվտանգություն» եզրով, իսկ «առանձնապես ծանր հանցագործություն» եզրը՝ «առանձնապես լուրջ հանցագործություն» եզրով՝ առավել ամբողջական արտացոլելով 1951թ. կոնվենցիայով և Սահմանադրությամբ ամրագրված մոտեցումները:

2.5. «Ընտանիքի անդամ» հասկացության սահմանումը և միասնական ընտանեկան դիմումների քննությանը առնչվող կարգավորումները առավել հստակեցման կարիք ունեն՝ պրակտիկայում միասնական կիրառություն ապահովելու համար՝ համաձայն միջազգային չափանիշների: Առաջարկվող կարգավորումներով վերացվել է այն պահանջը, համաձայն որի փախստականի

ընտանիքի անդամը փախստականի կարգավիճակից օգտվում է բացառապես այն դեպքում, երբ չունի արդյունավետ պաշտպանություն տրամադրող՝ այլ պետության քաղաքացիություն: Կարգավորման տրամաբանությունը բխում է ընտանիքի միասնության պահպանման սկզբունքից՝ հաշվի առնելով երրորդ երկրում փախստականի ընտանիքի վերամիավորման և հաստատման բարդությունները:

2.6. Հատուկ կարիքներով անձանց ցանկում ընդգրկված չեն տարեցները և հնարավոր այլ խոցելիություն ունեցող անձինք: Առաջարկվող կարգավորումները ներառում են տարեցներին և հատուկ կարիքներով անձանց ցանկը դարձնում ոչ սպառիչ:

Ապաստան հայցողների կենսաապահովման պայմանները, իրավունքները, հատուկ կարիքներով անձանց համար երաշխիքները

2.7. Ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների տրամադրման գործող կարգավորումները ճկուն չեն և հաշվի չեն առնում հատուկ կարիքներով անձանց համար աջակցության տրամադրման առանձնահատկությունները, ինչի հետևանքով գործնականում սոցիալական աջակցությունից կարող են դուրս մնալ խոցելի և կարիքավոր մի շարք խմբեր, փոխարենը՝ սոցիալական աջակցության իրավունքը կարող են չարաշահել այն անձինք, ովքեր գրանցել են կենսապայմանների բարելավում կամ ընդհանրապես սոցիալական աջակցության կարիք չունեն: Առաջարկվող կարգավորումները սահմանում են ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների տրամադրման ճկուն և կարիքահեն ընթացակարգեր, որոնք թույլ կտան գործնականում սոցիալական աջակցությամբ ապահովել խոցելի և կարիքավոր խմբերին, իսկ կենսապայմանների բարելավում գրանցած անձանց կենսաապահովման պայմանները համաչափորեն նվազեցնել կամ դադարեցնել՝ պահպանելով համապատասխան ընթացակարգային երաշխիքները: Առաջարկվող լրամշակումները նաև հիմք են ստեղծում կենսաապահովման պայմանների տրամադրման գործող եղանակների դիվերսիֆիկացման, մասնավորապես, ընդլայնելով որպես ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոն ծառայող տարածքների սահմանումը և այլևս միջազգային չափանիշներին

չհամապատասխանող ճանաչված՝ բնաիրային օգնությունը փոխարինելով այլ՝ առավել արժանապատիվ համարվող եղանակներով:
Նախագծով առաջարկվում է նաև ստեղծել կենսաապահովման պայմանների ապահովման նկատմամբ մոնիթորինգի մեխանիզմ:

- 2.8. Ապաստանի տրամադրման վարչական վարույթում անվճար իրավաբանական ներկայացուցչություն նախատեսված չէ, իսկ իրավաբանական օգնության հասանելիությունը ապահովելու կառուցակարգերը բարելավման կարիք ունեն՝ հաշվի առնելով այն խոչընդոտները, որոնց կարող են բխվել ապաստան հայցողները: Նախատեսվում է անվճար իրավաբանական ներկայացուցչություն ապաստանի տրամադրման վարույթի բոլոր փուլերում, այդ թվում՝ ապաստանի հայցը ներկայացնելիս, ինչպես նաև հստակեցվում են իրավասու մարմինների կողմից իրավաբանական օգնությունը ապահովելու ընթացակարգերը՝ վերացնելու իրավաբանական օգնության արդյունավետ հասանելիության այն խոչընդոտները, որոնց ապաստան հայցողները բխվում են պրակտիկայում:⁴
- 2.9. Նախատեսված չէ հատուկ կարիք ունեցող ապաստան հայցողների՝ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական աջակցությունից օգտվելու իրավունքը: Երաշխավորվում համար պատշաճ կենսամակարդակի իրավունքը և հատուկ կարիքներով անձանց պաշտպանության և աջակցության ոլորտում պետության ստանձնած պարտավորությունների կատարումը՝ առաջարկվող կարգավորումները սահմանում են, որ ի լրումն անձի հիմնական նյութական պահանջումների (կացարան, սնունդ, առաջին անհրաժեշտության հիգիենայի և կենցաղային պարագաներ, հագուստ, կոշիկ և այլն) բավարարման և որոշակի ազատ միջոցներ ունենալու նպատակով Օրենքի շրջանակներում լիազոր մարմնի կողմից տրամադրվող օգնությանը, հատուկ կարիք ունեցող

⁴ Իրավաբանական օգնության արդյունավետ հասանելիության երաշխիքների ամրապնդման անհրաժեշտությունը, բխում է, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: St'u Conka v. Belgium, 51564/99, 5 February 2002, para. 44, <https://www.refworld.org/cases,ECHR,3e71fdb4.html>, M.S.S. v. Belgium and Greece, 30696/09, 21 January 2011, para. 301, <https://www.refworld.org/jurisprudence/caselaw/echr/2011/en/77079>, S. H. v. Malta, 37241/21, 20 December 2022, [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-221838%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-221838%22]}):

St'u նաև UN High Commissioner for Refugees (UNHCR), UNHCR observations on the draft amendments to the Law on Refugees and Asylum and the Administrative Procedure Code of the Republic of Armenia, September 2020, <https://www.refworld.org/legal/natlegcomments/unhcr/2020/en/123411>:

ապաստան հայցողները ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սոցիալական աջակցության այլ համապատասխան ձևերից օտվելու իրավունք, եթե բավարարում են այդ օրենսդրության պահանջները:

2.10. Հատուկ կարիք ունեցող ապաստան հայցողների համար Օրենքով նախատեսված որոշ ընթացակարգային երաշխիքների ապահովման համար անհրաժեշտ կառուցակարգեր նախատեսված չեն: Հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողների համար նախատեսված չէ անվճար հոգեբանական աջակցություն ստանալու իրավունք՝ ընթացակարգերին նրանց արդյունավետ մասնակցությունը ապահովելու համար: Նախատեսված չեն երեխաների կողմից ապաստան հայցելու առանձնահատկությունների հաշվառմամբ հատուկ ընթացակարգեր: Առաջարկվող կարգավորումները հստակեցնում են ապաստանի վարույթում իրավասություն ունեցող պետական մարմինների լիազորությունները հատուկ կարիքների գնահատման, մասնագետների ներգրավման, հատուկ կարիքներով անձանց տեղավորման և խնամքի կազմակերպման, երեխայակենտրոն ընթացակարգերի ապահովման և երեխայի լավագույն շահի գնահատման հարցում: Առաջարկվող կարգավորումները նաև հստակեցնում են առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների ներկայացուցիչներին ներկայացվող պահանջները՝ համաձայն ՄԱԿ Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության:

2.11. Բավարար չափով երաշխավորված չէ ապաստան հայցողների և փախստականների կրթության իրավունքը: Նախագիծը հստակեցնում է իրավասու մարմինների լիազորությունները ապաստան հայցողների և միջազգային պաշտպանություն ստացած անձանց շրջանում պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման ոլորտում: Առաջարկվող կարգավորումները նաև նախատեսում են նախապատրաստական դասընթացներ, ինչպես նաև նվազ խիստ պահանջեր՝ փաստաթղթերի բացակայության դեպքում ընդունելության համար:

2.12. Առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունը անչափահաս ապաստան հայցողների վրա չտարածելու բացառությունը հստակ նախատեսված չէ: Առաջարկվող կարգավորումները համապատասխան լրացում են նախատեսում Քրեական օրենսգրքում:

2.13. Առկա է անհրաժեշտություն հստակեցնելու առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող նորմի պրակտիկ կիրառությունը ապահովող ընթացակարգերը: Առաջարկվող կարգավորումները նախատեսում են քրեական վարույթի կասեցման համապատասխան հիմք՝ քանի դեռ ապաստանի հայցը գտնվում է քննության փուլում: Այս կարգավորումը հնարավորություն կտա ապահովելու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը, քանի որ այն դեպքում, երբ պարզվում է, որ քրեական հետապնդման ենթարկվող և կալանավորված անձը համապատասխանում է փախստական ճանաչվելու հիմքերին և ստանում է այդ կարգավիճակը, 1951թ. կոնվենցիայի 31-րդ հոդվածով նախատեսված պատժի չենթարկելու սկզբունքի անդառնալի խախտումը արդեն իսկ տեղ գտած է լինում:

2.14. Նախատեսված չէ ապաստան հայցողների՝ անշարժ գույքի ձեռքբերման, տնօրինման, տիրապետման, օգտագործման՝ օտարերկրյա քաղաքացիների համար նախատեսված կարգավորումներից օգտվելու իրավունքը, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Առաջարկվող կարգավորումները նախատեսում են այդ հնարավորությունները՝ ապաստան հայցողների ինքնաբավությունը խթանելու և պետական աջակցությունից կախվածությունը նվազեցնելու նպատակով:

Ապաստանի տրամադրման ընթացակարգերի հասանելիության, արդարության և արդյունավետության երաշխիքները

2.15. Բավարար չափով երաշխավորված չեն ազատությունից զրկված օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները՝ ապաստան հայցելու իրավունքի մասին ծանուցման և իրավաբանական օգնության ապահովման գործուն մեխանիզմների տեսանկյունից: Համապատասխան իրավական ակտերում առաջարկվող կարգավորումների նպատակն է հստակեցնել իրավասու մարմինների լիազորությունները՝ կապված ապաստան հայցելու իրավունքի մասին ծանուցման հետ, ինչպես նաև ապաստանի ընթացակարգերի վաղ փուլում իրավաբանական օգնության ապահովման մեխանիզմները: Առաջարկվում է նաև ազատությունից զրկված անձանց դեպքում ապաստանի հայցի ներկայացումը փաստաբանի միջոցով:

2.16. Հայաստանի Հանրապետության տարածք ապաստան հայցողների մուտքի երաշխիքները հստակցեման կարիք ունեն՝ այդ թվում տեղեկությունների, իրավաբանական օգնության և իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիության առումով՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի⁵ և միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկայի: Առաջարկվող կարգավորումները նշված բացերը նախատեսում են հասցեագրել՝ սահմանին ապաստանի իրավունքի մասին տեղեկությունների տրամադրման երաշխիքների, իրավաբանական օգնության հասանելիության և թարգմանչական ծառայությունների ապահովման երաշխիքների, մուտքի արգելքի որոշումների դեմ իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի հասանելիության երաշխիքների ամրապնդմամբ:⁶ Նախատեսվում են նաև կոնկրետ հիմքերը, որոնց առկայության դեպքում Սահմանապահ զորքերը կարող են որոշում կայացնել ապաստան հայցողներին «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հատուկ կացարանում մինչև 72 ժամ տևողությամբ պահելու մասին:

2.17. Ապաստանի դիմումը հաշվառելու ընթացակարգը լրացուցիչ կարգավորման կարիք ունի՝ ապահովելու ընթացակարգերի կանխատեսելիությունը և արդյունավետությունը, այդ թվում՝ հերթերի կառավարման էլեկտրոնային գործիքների ներդրումը, հեռավար թարգմանչական ծառայությունների գործածումը և ապաստան հայցողներին տրամադրվող տեղեկությունների շրջանակը և եղանակը, մասնավորապես ապաստանի հայցից հրաժարվելու, պահանջվող տեղեկությունները չտրամադրելու և չհամագործակցելու իրավական հետևանքների մասին: Առաջարկվող լրամշակումները հստակ ժամկետային կարգավորման են

⁵ Hirsi Jamaa and Others v. Italy [GC], § 133; M.A. and Others v. Lithuania, §§ 108-109; D v. Bulgaria, §§ 120-128, Kebe and others v. Ukraine §§ 104-108, E.H. v. France, § 195, Z.A. and Others v. Russia [GC], § 138; Ilias and Ahmed v. Hungary [GC], §§ 217-218, W.A. and Others v. Hungary:

Տե՛ս նաև Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013 on common procedures for granting and withdrawing international protection, Articles 8(1) and 12(1) (b), <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A32013L0032>:

⁶ UN Human Rights Committee, A.B. and B.D. v. Poland, Communication No. 3017/2017, 3 February 2023, paras. 9.4-9.7, <https://digitallibrary.un.org/record/4002107?v=pdf>:

ենթարկում հաշվառման գործընթացը՝ նախատեսելով նաև նախքան ապաստանի դիմումի հաշվառումը ապաստանի խնդրանք ներկայացրած անձին դրա մասին հավաստող տեղեկանքի տրամադրումը: Հստակեցվում են նաև երեխաների կողմից ապաստանի դիմումների ներկայացման ընթացակարգային կարգավորումները:

2.18. Ապաստան հայցողի լաված լինելու իրավունքը ապահովելուն ուղղված կարգավորումները, այդ թվում հարցազրույցի սղագրության կազմման, ծագման երկրի մասին տեղեկությունների տրամադրման, կայացվող որոշումների ամբողջական թարգմանության մասին, լրամշակման կարիք ունեն՝ հաշվի առնելով ժամանակի մարտահրավերները, ընթացակարգերի առանձնահատկությունները և նախատեսվող լրացուցիչ երաշխիքները, մասնավորապես՝ անվճար իրավաբանական ներկայացուցչությունը և դրա ապահովման գործուն կառուցակարգերը վարչական վարույթի փուլում: Առաջարկվող կարգավորումները որոշակիորեն թեթևացնում են վարչական բեռը՝ նախատեսելով առավել արդյունավետ կառավարման մեխանիզմներ՝ միաժամանակ չնվազեցնելով ընթացակարգային երաշխիքների շեմը:

2.19. Ապաստանի արագացված ընթացակարգերը կիրառելու հիմքերը ընդլայնման կարիք ունեն: Առաջարկվող կարգավորումները այդ հիմքերի շարքում ներառում են նաև ակնհայտ հիմնավոր դիմումները:

2.20. Ծանուցման ընթացակարգերը հստակեցման և բարելավման կարիք ունեն, մասնավորապես՝ էլեկտրոնային գործիքների կիրառմամբ: Առաջարկվող կարգավորումները շտկում են ծանուցման ընթացակարգերի մասին տարբեր նորմերի միջև հակասությունները, նախատեսում էլեկտրոնային գործիքների միջոցով արդյունավետ ծանուցումներ, ինչպես նաև ծանուցումներ միայն կամ նաև փաստաբանի միջոցով:

2.21. Ապաստանի վարույթի կասեցման, կարճման, վերսկսման հիմքերը, ինչպես նաև ապաստանի տրամադրման վարչական վարույթի ժամկետները վերանայման կարիք ունեն: Պայմանավորված պրակտիկայում առաջացող բարդություններով և դրանցով պայմանավորված անհրաժեշտությամբ՝ առաջարկվող կարգավորումները նախատեսում են վարույթի կասեցման և կարճման

լրացուցիչ հիմքեր, ինչպես նաև հստակեցնում են այն ողջամիտ ժամկետները, որոնց ընթացքում վարույթը կարող է վերսկսվել, իսկ չվերսկսվելու դեպքում՝ հետագա բոլոր դիմումները նոր հանգամանք պահանջող հաջորդ դիմում համարելու իրավական հիմքերը:

2.22. Ապաստան հայցողների ինքնության ճշտման և փաստաթղթավորման համակարգը կատարելագործման կարիք ունի՝ հաշվի առնելով ժամանակի պահանջները և տեխնոլոգիական լուծումները: Նախատեսվում է կենսաչափական տվյալների հավաքագրում, իսկ վկայականի վրա վավերականության ժամկետի մասին նշման բացառում՝ հնարավորություն տալով ժամկետի երկարաձգումը իրականացնել ծրագրային միջամտությամբ՝ ապահովելով վարչական ռեսուրսի խնայում:

2.23. Պետական մարմինների միջև անձնական տվյալների փոխանցման դեպքերը և նպատակները հստակեցման կարիք ունեն՝ ապահովելու արագ և արդյունավետ փոխգործակցություն՝ անձնական տվյալների պաշտպանության մասին ազգային օրենսդրությանը և միջազգային չափանիշներին համապատասխան: Առաջարկվող կարգավորումները հնարավորինս հստակեցնում են համապաստախան դեպքերը և նպատակները՝ իրավական հիմք ստեղծելով նաև էլեկտրոնային գործիքների կիրառմամբ, այդ թվում՝ ինքնաշխատ հարցումների համար:

2.24. Ապահովված չէ հիմնավորված որոշումների համար անհրաժեշտ տեղեկությունների հասանելիություն և արդյունավետ պաշտպանություն այն դեպքում, երբ ազգային անվտանգության բնագավառում պետական լիազոր մարմինը տալիս է պետական անվտանգության սպառնալիքի մասին եզրակացություն: Առաջարկվող կարգավորումները նախատեսում են այդ տեղեկությունների բացահայտման հավասարակշռված մեխանիզմ՝ հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան և

միջազգային փորձը⁷, ինչպես նաև բացահայտում են պետական անվտանգությանը լուրջ վտանգ սպառնալու դեպքում համաչափության սկզբունքի առանձնահատկությունները՝ համաձայն 1951թ.-ի կոնվենցիայի նպատակի:⁸

2.25. Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդման ենթարկվող կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրացիների վերաբերյալ ապաստանի տրամադրման վարույթները լրացուցիչ հստակեցումների կարիք ունեն՝ հաշվի առնելով համապատասխան դրույթների կիրառման՝ պրակտիկայում հանդիպող բարդությունները: Առաջարկվող կարգավորումները

⁷ Պետական անվտանգության սպառնալիքի մասին կարծիքի սահմանափակ հիմքերը լիազոր մարմնին և ապաստան հայցողին տարամադրելու անհրաժեշտությունը հիմնավորված է, ի թիվս այլնի, հետևյալ աղբյուրում՝ UN High Commissioner for Refugees (UNHCR), Armenia: UNHCR Comments on the Draft Amendments to the Law of the Republic of Armenia on Refugees and Asylum Specifying the Role and Procedural Standards of Engagement of the National Security Service in Asylum Procedures, 7 May 2020, page 7, available at: <https://www.refworld.org/docid/5eb55f4b4.html>: Պետության շահերի և անձանց դատավարական երաշխիքների միջև հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը՝ ազգային անվտանգության նկատառումների համատեքստում, բազմիցս ընդգծվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից. տե՛ս, օրինակ, Chahal vs. the UK, Application no. 22414/93, para. 131, որում ասվում է, որ Եվրոպական դատարանն ընդունում է, որ գաղտնի նյութերի օգտագործումը կարող է անխուսափելի լինել, երբ վտանգված է ազգային անվտանգությունը, այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ ազգային իշխանությունները կարող են զերծ մնալ ազգային դատարանների արդյունավետ վերահսկողությունից, երբ նրանք որոշում են պնդել, որ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը և ահաբեկչությանը (տե՛ս, mutatis mutandis, the Fox, Campbell and Hartley v. the United Kingdom judgment of 30 August 1990, Series A no. 182, p. 17, para. 34, and the Murray v. the United Kingdom judgment of 28 October 1994, Series A no. 300-A, p. 27, para. 58): Եվրոպական դատարանը մեծ նշանակություն է տալիս այն փաստին, որ Կանադայում մշակված դատական վերահսկողության օրինակով կարող են օգտագործվել այնպիսի մեթոդներ, որոնք հաշվի են առնում անվտանգության օրինական նկատառումները, որոնք կապված են հետախուզական տեղեկատվության բնույթի և աղբյուրների հետ, միևնույն ժամանակ անձին ապահովում են դատավարական երաշխիքների զգալի միջոցներով: Այս հարցի վերաբերյալ տե՛ս նաև Ljatici v. the Former Yugoslav Republic of Macedonia, Application no. 19017/16, para. 35 which states: «[...] նույնիսկ այն դեպքում, երբ վտանգված է ազգային անվտանգությունը, ժողովրդավարական հասարակությունում օրինականության և օրենքի գերակայության հասկացությունները պահանջում են, որ արտաքսման միջոցները, որոնք ազդում են մարդու հիմնարար իրավունքների վրա, քննության առարկա լինեն մրցակցային դատավարության ինչ-որ ձևի կիրառմամբ անկախ մարմնում կամ դատարանում, որը իրավասու է արդյունավետորեն բացահայտել դրանց պատճառները և, անհրաժեշտության դեպքում, դիտարկել գաղտնի տեղեկատվության օգտագործման ընթացակարգային սահմանափակումները: Անձը պետք է կարողանա վիճարկել գործադիր իշխանության այն պնդումը, որ վտանգված է ազգային անվտանգությունը: Չնայած գործադիրի կողմից ազգային անվտանգությանը սպառնացող գնահատումը, բնականաբար, զգալի կշիռ կունենա, անկախ իշխանությունը կամ դատարանը պետք է ի վիճակի լինեն արձագանքել այն դեպքերում, երբ այս հայեցակարգի օգտագործումը փաստական ողջամիտ հիմնավորում չունի կամ տրվում է «ազգային անվտանգություն» հասկացությանը անօրինական կամ ողջամտությանը հակասող և կամայական մեկնաբանություն: [...]»: Տե՛ս նաև A. and Others v. the UK, 19 February 2009, no. 3455/05, §204, C.G. and Others v. Bulgaria, 24 April 2008, no. 1365/07, §57:

⁸ Տե՛ս UN High Commissioner for Refugees (UNHCR), UNHCR Comments on the Draft Amendments to the Law of the Republic of Armenia on Refugees and Asylum Specifying the Role and Procedural Standards of Engagement of the National Security Service in Asylum Procedures., 7 May 2020, <https://www.refworld.org/legal/natlegcomments/unhcr/2020/en/123200>:

նախատեսում են ապաստանի հայց ներկայացնելու բաց թողնված ժամկետի վերականգնման հնարավորություն և ապաստանի հայցի ներկայացում նոր երևան եկած հանգամանքների պարագայում՝ ապահովելու չվերադարձելիության սկզբունքի պահպանումը, ինչպես նաև նմանատիպ գործերով ձևավորված ներպետական դատական պրակտիկայից բխող պահանջները:

2.26. Ապաստանի կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության տարածք մուտքը չթույլատրելու որոշումների բողոքարկման գործերով, Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում ապաստան հայցողների պահման և պահման պայմանների դեմ ուղղված հայցերով, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից ներկայացված ապաստանի հայցի հիման վրա հարուցված ապաստանի տրամադրման վարույթի արդյունքում լիազոր մարմնի կայացրած միջամտող կամ զուգորդվող վարչական ակտը և ապաստան հայցողի կենսաապահովման պայմանները տրամադրելու, փոխարինելու, նվազեցնելու կամ դադարեցնելու մասին վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերով նախատեսված չեն վարչադատավարական հատուկ ընթացակարգեր, որի հետևանքով այդ գործերը քննության են ենթակա ընդհանուր կանոններով (գործի քննության ողջամիտ ժամկետ, բողոքարկման ընդհանուր կարգ և ժամկետներ, ապացուցման ընդհանուր կանոններ և այլն): Առաջարկվող կարգավորումները նախատեսում են վարչադատավարական հատուկ ընթացակարգեր, որոնք թույլ կտան ժամանակին և արդյունավետորեն լուծել տվյալ վեճերը:

Այլ կարգավորումներ

2.27. Նախատեսված չեն փախստականների համար ընտանիքի վերամիավորման պարզեցված ընթացակարգեր այն դեպքում, երբ առկա են անհաղթահարելի խոչընդոտներ: Հաշվի առնելով ընտանիքի միասնության պահպանման հիմնարար սկզբունքի հրամայականը՝ առաջարկվող կարգավորումները նախատեսում են էլեկտրոնային եղանակով դիմումների ընդունում, ինչպես նաև ճամփորդական փաստաթղթերի տրամադրում ընտանիքի անդամներին:

- 2.28. Հստակեցված չէ այն օտարերկրացիների կարգավիճակը, ում նկատմամբ կիրառելի են արտաքսումն արգելող դրույթները: Առաջարկվող կարգավորումները նախատեսում են նշված անձանց կացության կարգավիճակի տրամադրում, ինչպես նաև ազատում նրանց պետական տուրքից:
- 2.29. Նախատեսված չեն օտարերկրացու արտաքսումն արգելող մարդասիրական հիմքեր: Հաշվի առնելով միջազգային փորձը և պրակտիկ իրավիճակներից բխող անհրաժեշտությունը՝ առաջարկվող կարգավորումները հայեցողական լիազորություն են նախատեսում մարդասիրական հիմունքներով արտաքսման արգելք կիրառելու այն դեպքում, երբ առկա է կյանքին վտանգ սպառնացող կամ ծանր հիվանդություն, և վերադարձը ծագման երկիր կարող է իրական վտանգ ստեղծել օտարերկրացու համար՝ էականորեն նվազեցնելով կյանքի տևողությունը կամ հանգեցնելով առողջական վիճակի լուրջ, արագ և անդառնալի անկման, ուժեղ ցավերի, ներառյալ՝ երբ համապատասխան բժշկական օգնությունը հասանելի չէ ծագման երկրում:⁹
- 2.30. Առկա օրենսդրական կարգավորումները հնարավորություն չեն տալիս կարճատև վավերականությամբ ճամփորդական փաստաթղթեր տրամադրել այն օտարերկրացիներին, ովքեր բացառիկ հանգամանքներով պայմանավորված ճամփորդելու կարիք ունեն, սակայն չունեն համապատասխան փաստաթղթեր և դրանք իրենց ծագման երկրից ձեռք բերելու հնարավորություն: Առաջարկվող կարգավորումները իրավական հիմք են նախատեսում այդպիսի փաստաթղթերի տրամադրման համար ապաստան հայցողներին, ինչպես նաև ապաստանի մերժում ստացած փախստականներին՝ երրորդ ապահով երկիր մեկնումը հնարավոր դարձնելու նպատակով:

⁹ Court of Justice of the European Union, Grand Chamber, X v. Staatssecretaris van Justitie en Veiligheid, C-69/21, 22 November 2022:

3. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերը մշակվել են ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության կողմից՝ Եվրոպական միության կողմից համաֆինանսավորվող ծրագրի շրջանակներում ՄԱԿ ՓԳՀ տեխնիկական և փորձագիտական աջակցությամբ և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է լավարկել ապաստանի ոլորտում օրենսդրական դաշտը: Մասնավորապես՝ առաջարկվող բարեփոխումների արդյունքում նախատեսվում է ունենալ, ի թիվս այլնի, միջազգային պաշտպանության հստակ ձևեր, որոնք ներառում են ոչ միայն փախստականներին ապաստան տրամադրելը, այլև չվերադարձելիության սկզբունքից օգտվող օտարերկրացիների պաշտպանությունը, «փախստական» հասկացության տարրերի առավել հստակ բնորոշում, ապաստանի մերժման հստակ և կանխատեսելի հիմքեր, ապաստան հայցողների սոցիալական աջակցության արդարացի ընթացակարգեր, իրավաբանական օգնություն ստանալու ապաստան հայցողների իրավունքի ապահովման երաշխիքներ, առավել թափանցիկ, հեշտացված և կանխատեսելի ընթացակարգեր և պատճառաբանված որոշումներ, անձնական տվյալների օգտագործման հստակ կանոններ, սահմանին ապաստան հայցողների, քրեական հետապնդման ենթարկվող և հանձման ենթակա օտարերկրացիների, երեխաների իրավունքների երաշխիքներ:

Առաջարկվող փոփոխությունները միտված են նաև ապաստանի վերաբերյալ օրենսդրությունը Եվրոպական միության իրավական համակարգին առավելագույնը մոտարկելուն: Մասնավորապես՝ նախագծերով առաջ քաշված մի շարք բարեփոխումների հիմքում ընկած

են ապաստանի ոլորտում Եվրոպական միության հրահանգներով¹⁰ սահմանված դրույթները, որոնք ձևավորվել են միջազգային լավագույն փորձի ամփոփման արդյունքում:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Նախագծերը բխում են Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի 4.2 կետով և Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի 19-րդ կետով սահմանված՝ միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործման անհրաժեշտությունից:

6. Լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունները

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը բացակայում է. ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեի ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

¹⁰ Directive 2011/95/EU of the European Parliament and of the Council of 13 December 2011 on standards for the qualification of third-country nationals or stateless persons as beneficiaries of international protection, for a uniform status for refugees or for persons eligible for subsidiary protection, and for the content of the protection granted, <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2011:337:0009:0026:en:PDF>, Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013 on common procedures for granting and withdrawing international protection, Articles 8(1) and 12(1) (b), <https://eur-lex.europa.eu/legal-content/en/TXT/?uri=CELEX%3A32013L0032>:

